ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

# ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

## ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

(ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ 3-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ)

930. ՅԵՐԵՎԱՆ 1930

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

338.1K(09)

# ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

## ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

(ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ 3-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ)

1930 ԵՐԵՎԱՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

*Պատվեր 3342*   *Գրատեխ. 5309 (բ)*   *Տիրաժ 5.000*

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գյուղանտառ Միության Հայաստանի Հանրապետական Կոմիտեն ձեռնարկելով Համամիութենական կենտկոմի 3-րդ պլենումի վորոշումների իրատարակման գործը, նպատակ ունի մեր միության բոլոր ղեկավար մարմիններին, բատրակներին, գյուղատնտեսական բանվորներին և մասնագետներին ծանոթացնել վերակառուցման շրջանի, մեր հերթական խնդիրների և անելիքների հետ,—գյուղատնտեսական և անտառային բանվորներին և մասնագետներին համախմբելով միության շուրջը՝ նրանց մոբիլիզացիայի յենթարկել ակտիվորեն մասնակցելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին:

Բրոշյուրի հրատարկումը չնայած ուշացել է մի շարք տեխնիկական անհարմարությունների պատճառով, սակայն իր այժմեականությունը չի կորցրել և միանգամայն բղխում է վերակառուցման շրջանի մեր միության հերթական խնդիրներից. դրա հետ միասին բրոշյուրի մեջ կան մի շարք խնդիրներ, վորոնք ճիշտ չեն և արդյունք են կոլեկտիվացման փրոնտում մեր կատարած սխալների:

Առաջին՝ դա վարձու աշխատանքին վերաբերյալ հարցն է համատարած կոլեկտիվացման շրջանում, վորտեղ ասված է.—«Միությունն ու խորհուրդները

համատարած կոլեկտիվացման շրջանում վճռական պայքար են մղում բատրակների բոլոր տեսակի վարձման դեմ»։ Իհարկե թե՛ կոմ. կուսակցության և թե՛ մեր միության նպատակն է վերջնականապես վերացնել վարձու աշխատանքը, սակայն ներկա դեպքում այդ չի կարելի կիրառել. կոլտնտեսությունների նոր օրինակելի կանոնադրության համաձայն, թույլատրվում կոլխոզի և նրա առանձին անդամներին իրենց անասուններն ունենալ (կթան և այլն)։ Այս հանգամանքը ինքնըստինքյան առիթ է հանդիսանում կոլխոզի անդամ առանձին գյուղացիներին համայնական ձևով հովիվ-տավարածներ պահելու։ Եթե այդպես է, ուրեմն վարձու աշխատանքը պետք է գոյություն ունենա անկախ մեր ցանկությունից. թույլ չտալ միության կողմից այդպիսին, նշանակում է ստիպել կոլտնտեսական գյուղացուն՝ ինքն իր սեփական ուժերով պահի իր անասունը, իսկ այդ դրությունն առիթ կդառնա գյուղացուն կոլխոզի աշխատանքից կտրվել և զբաղվել իր մեկ կամ երկու անասուն պահելով, որը կարող է վնաս հասցնել կոլխոզների աշխատանքներին։

Այժմ, երբ կոլխոզների աշխատանքներն անհրաժեշտ չափով դեռ մեքենայացված չեն, ուրեմն դեռ երկար ժամանակ կոլխոզները վորակյալ բանվորական և մասնագիտական ուժեր (տրակտորիստ, գյուղատնտես, ինժեներ, տեխնիկ և այլն). պետք է ձեռք բերեն վարձելու միջոցով։ Տվյալ դեպքում մեր միությունը պետք է կոլտնտեսություններում գտնվող որավարձի և այլ բանվորների մասնագիտական ուժերն ու նրանց շահերը պաշտպանի և աշխատի աստիճանաբար նրանց ներգրավել կոլխոզների արտադրական-տնտեսական աշխա-

տանքների մինչև ակտիվորեն մասնակից դարձնելով՝ վերացնի բատրակի աշխատանքը կոլխոզներում:

Այս հանգամանքը բոլորովին չի նսեմացնում այն հսկայական ու կարևորագույն խնդիրները, վորոնք արձանագրված են պլենումի վորոշումների մեջ, վորոնք չափազանց օգտակար են մեր միության աշխատանքների համար:

Հանրապետական կոմիտեն հանձնարարում է միութենական բոլոր կազմակերպություններին մանրամասն ուսումնասիրել այդ վորոշումները և կիրառել կյանքի մեջ:

*Գյուղատնտես Միության Հանրապետական*
*կոմիտեյի Նախագահ՝* Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

## ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

### (Միության կենտկոմի 3-րդ պլենումի վորոշումները)

Պլենումը լսելով ընկ. ընկ. Անցելովիչի և Վինիչենկոյի զեկուցումները՝ նախագահության աշխատանքների և միության հերթական խնդիրների մասին՝ նախագահության քաղաքական գիծը գտնում է ճիշտ, գործնական աշխատանքը՝ բավարար և հավանություն է տալիս միության ապարատի վերակառուցման համար ձեռք առած միջոցներին:

### ՀԱՆՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Պլենումը գտնում է, վոր ամբողջ շրջանների ու նահանգների համատարած կոլեկտիվացման անցնելը, խորհրդային տնտեսությունների տարածությունները միլիոնավոր հեկտարներով ընդարձակելը, խոշորագույն հացահատիկային, կաթնա-բանջարաբուծական, անասնապահական և այլ գյուղատնտեսական գործա-

բանների կառուցումը, մեքենատրակտորային կայանների, փայտամշակման և փայտա-արդյունաբերական խոշոր գործարանների կազմակերպումը միության զարգացման մեջ մի նոր շրջան են վորոշում :

Խորհրդային տնտեսությունների շինարարության և կոլեկտիվ տնտեսությունների զարգացման բացառիկ թափի ունեցող տեմպերը և այդ ուղղությամբ յեղած հետագա հնարավորությունները շատ ու շատ հետ են թողնում բոլոր ծրագրերն ու յենթադրությունները :

Կուսակցության ու Խորհրդային Իշխանության լենինյան քաղաքականությունն ինդուստրացման հարցում (նրա արագ զարգացումը, արտադրական միջոցների արտադրությունը) նախապայմաններ է ստեղծել համատարած կոլեկտիվացման անցնելու համար և հենց դըրանով էլ հնարավոր է դարձրել այդ հիման վրա վերացնել կուլակությունը վորպես դասակարգ :

Համատարած կոլեկտիվացման բատրակային և չքավոր-միջակային մասսաները Կոմկուսակցության և Խորհրդային Իշխանության ղեկավարությամբ՝ արդեն գործնականում սկսել են արմատախիլ անել կապիտալիզմի մնացորդները գյուղում : Այդ շրջաններում սպակուլակացման, վորպես համատարած կոլեկտիվացման անբաժանելի մի մասի ուղղությամբ ձեռք առած միջոցները հենվում են բատրակային և չքավորա-միջակային մասսաների ակտիվության և նախաձեռնության վրա :

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը տեղի յե ունենում գյուղի և քաղաքի դասակարգային պայքարի սրման պայմաններում : Անհրաժեշտ է կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ

և արհմիությունների միջոցով մարտական մոբիլիզացիայի յենթարկել բանվոր դասակարգի բոլոր ուժերը, վորպեսզի, — ինչպես հարվածայինների համամիութենական համագումարն է վորոշել, — 4 տարում իրականացնենք հնգամյա պլանը:

## ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԿՐԱԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Պլենումը գտնում է, վոր բազմամիլիոն չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունները համատարած կոլեկտիվացման յենթարկելով և կուլակությունը, վորպես դասակարգ, վերջնականապես վերացնելով՝ կվերանա միևնույն ժամանակ բատրակի աշխատանքը:

Բատրակների և բատրակուհիների միլիոնավոր մասսան կմտնի կոլեկտիվ տնտեսությունները, վորպեսզի հանրայնացված տնտեսությունների մեջ աշխատի, չքավոր և միջակ գյուղացիների հետ միասին, վորպես խոշոր, հանրայնացված գյուղատնտեսության վերակառուցման իրավահավասար անդամ:

Հարյուր հազարավոր բատրակներ ու բատրակուհիներ, վորպես գյուղատնտեսական և անտառային վորակյալ բանվորներ, աշխատանքի կանցնեն խորհրդային տնտեսություններում և անտառային արդյունաբերական տնտեսություններում:

Գյուղատնտեսական և անտառային խոշոր, մեքենայացված տնտեսություններում հնգամյակի վերջում աշխատելու յեն մի քանի հարյուր հազար տրակտորիստներ, կոմբայնավարներ, մոտորավարներ, անասնաբուծական բանվորներ և այլ վորակի բանվոր-բանվորուհիներ:

Խորհրդային տնտեսությունները, մեքենատրակտորային կայանները, անտառա-արդյունաբերական տնտեսությունները, վորոնք կառուցվում են մեքենայական նորագույն տեխնիկայի հիմունքներով (իսկ հետո յել էլեկտրիֆիկացիայի յեն յենթարկվելու), հում նյութի վերամշակման ձեռնարկությունների հետ միասին, գյուղատնտեսության և անտառային տնտեսության խոշորագույն ինդուստրիալ կենտրոններ են դառնալու:

Հենց դրանով էլ նրանք դառնալու յեն հարյուր հազարավոր ինդուստրիալ կրթություն ստացած վորակյալ բանվորների աշխատանքի բազա:

Բանվորների այդ հսկա բազմությունը, իսկ մոտիկ ապագայում միլիոնանոց բանակը, տարեցտարի աճելու յե ի հաշիվ բատրակների, բոլոր բատրակներին գրավելով իր մեջ:

Վորքան համատարած կոլեկտիվացումը Խորհրդային Միության նորանոր շրջաններ ընդգրկի, այնքան իր կազմով և աշխատանքի բովանդակությամբ առավելապես գյուղական բնույթ ունեցող միությունը կդառնա գյուղատնտեսության և անտառային տնտեսության պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում աշխատող և ինդուստրիալ կրթություն ստացած բանվորների պրոֆմիություն:

## ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

(Բաց կռվում վերջնականապես կջախջախենք դասակարգային թշնամու դիմադրությունը)

Համատարած կոլեկտիվացման զարգացումը և այդ

հողի վրա կուլակության, վորպես դասակարգի, վե-
րացումը Խորհրդային Միության բոլոր շրջաններում տեղի յե ունենում դասակարգային պայքարի անչափ սրված պայմաններում:

Պլենումը մատնանշում ե այն հանգամանքը, վոր պրոֆակտիվի մի մասը թերագնահատում եր բատրակության ու չքավորության մեջ տարվելիք աշխատա-տանքը, յերբ գյուղում չափազանց սրվել եր դասակարգային պայքարը:

Բոլոր այն խոսակցությունները, թե համատարած կոլեկտիվացման շրջանում ներկայումս կուլակն արդեն չեզոքացված և զինաթափ ե արված, նշանակում ե կոմ-տարար թերագնահատել կուլակի խորամանկությունները և դրանով ել քաղաքական խոշորագույն սխալ գործել:

Կենտկոմի պլենումն ուշադրություն ե հրավիրում այն բանի վրա, վոր բատրակության ու չքավորության թույլ կազմակերպվածությունը և մանավանդ բատրակա-չքավորական խմբակների բացակայությունը խոշորագույն արգելքներ կստեղծեն կոլեկտիվացումն արագ կատարելու և համատարածի շրջաններում կուլակությունը, վորպես դասակարգ, վերացնելու գործում:

Չի կարելի մտածել, թե մեր յերկրում սոցիալիզմի կառուցման շնորհիվ կործանման դատապարտված կապիտալիստական տարրերն ինքնըստինքյան կվերանան, կամ թե սոցիալիզմի ամենակատաղի թշնամի կուլակի վերացումը կարող ե տեղի ունենալ կամպանիայի ձեվով, առանց բատրակների և չքավոր ու միջակ գյուղացիների միլիոնավոր մասսաների մարտական մասնակցության:

Գյուղում և մանավանդ համատարած կոլեկտիվացման շրջանում դասակարգային պայքարի սրումը պահանջում ե վճռականապես պայքարել՝ բանվոր դասակարգի կատաղի թշնամի կուլակի ուժերը թերագնահատելու դեմ: Հենց այս թերագնահատությունից բխում ե այն, վոր բատրակության մեջ աշխատող պրոֆակտիվի մի մասը վորոշ տեղեր այնքան հեռու յե գնացել (Գերմանական Հանրապետությունը և այլն), վոր սկսել ե լուծարքի յենթարկել միութենական մարմինները. իսկ դրա պատճառով ել դեպքեր են յեղել, յերբ բատրակները դուրս են յեկել պրոֆմիության շարքերից:

Այս ամենը միմիայն ոգնում ե կուլակին և բատրակությունը զինաթափ ե անում դասակարգային թշնամու առաջ:

Մյուս կողմից՝ դա ցույց ե տալիս, վոր պրոֆակտիվի մի մասը դեռևս կտրված ե մասսայից, անուշադիր ե վերաբերվում դեպի բատրակի ու բատրակուհու պահանջներն ու կարիքները, շատ անգամ դասակարգային պայքարի սուր մոմենտին վորոշ միութենական մարմիններ չեն ոգնում բատրակներին (կուլակային տերերի, բատրակներին և բատրակուհիներին ծաղրի յենթարկելու և այլ դեպքերում):

Պլենումը դատապարտում ե այդ բոլոր լիկվիդատորական տրամադրությունները ու քայլերը և առաջարկում ե գյուղբանկոմին ինքնագլուխ ցրելու ամեն մի դեպք համարել այնպիսի մի գործողություն, վոր ուղղված ե թուլացնելու բատրակության կազմակերպվածությունը՝ կուլակության, վորպես դասակարգ, վերացնելու գործում և հենց դրանով ել գործնականում աջ թեքման ամենակոպիտ յերևույթ ե հանդիսանում:

# ԿՈՓԵՆՔ ԲԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ

Պլենումն ընդունում է, որ համատարած կոլեկտիվացման շրջաններում առանձնապես կարևոր է զարգացնել բատրակ–չքավորական մասսաների հեղափոխական աչալրջությունը կուլակի ոյինբազությունների չարժումներին արթուն հետևելու համար և ուժեղացնել բատրակ մասսաների կազմակերպվածությունն ու մարտունակությունը: Ամենից առաջ միությունը պետք է իր ամբողջ ուշադրությունը դարձնի, որ անհապաղ պայքար կազմակերպվի կուլակների և կուլակների ազդեցության տակ գտնվողների կողմից գյուղատնտեսական գործիքները, անասունը, կերը և այլն գույք ծախելու և փչացնելու դեմ:

Անհրաժեշտ է ամեն մի փոքր ու մեծ գյուղում բատրակության և չքավորության միջոցով ամեն կերպ ուժեղացնել միջակային մասսաների վրա ունեցած ազդեցությունը և այնպես անել, որ կուլակությունն ու յենթակուլակները միանգամայն առանձնացվեն նրանց դեմ ուղղված միջոցներին դիմադրություն ցույց տալու փորձեր անելիս:

Այս պայքարի մյուս կարևորագույն պայմանն է հանդիսանում բատրակ մասսաների դրահավաքը՝ ընդդեմ կուլակի, վարձողի վաշխառուի, առևտրականի, խանութպանի, ձեռնարկատերերի, կապալառուների ու նրանց անխուսափելի ուղեկիցների՝ քահանայի, մոլլայի, քեշիշի, պաստերի ռաբբու, նույնպես և բյուրոկրատ յենթակուլակի, վնասարարի և Խորհրդային Իշխանության ու սոցիալիզմի այլ թշնամիների:

Ամեն մի փոքր ու մեծ գյուղում կուլակների լրիվ

զինաթափումը խորհուրդների միջոցով, նրանց արտադրական միջոցները բռնագրավելով, բատրակա-չքավորական միջակային մասսաների զորահավաքը՝ այս կռիվը մղելու համար, — ահա դրանք են այսօրվա մարտական խնդիրները համատարած կոլեկտիվացման շրջաններում:

Միութենական մարմինները ակտիվ կերպով պետք է բացատրեն բատրակ ու չքավոր-միջակ մասսաներին, վոր ներկա մոմենտում խնդիրը կուլակի այնպիսի ապակուլակացման մասին է, վոր այսուհետև այլևս անկարելի դառնա թե կուլակների գոյությունը և թե կուլակային շահագործումը:

## ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՅԵՎ ԱՊԱԿՈՒԼԱԿԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՋԱԽՋԱԽԵՆՔ ԿՈՒԼԱԿԻՆ

Դա նշանակում է, վոր միայն ապակուլակացումը համատարած կոլեկտիվացման հետ սերտ կապելով, կոլտնտեսությունները ամրացնելու, նրանց մեջ աշխատանքը կազմակերպելու և այդ աշխատանքի արտադրողականությունը ամրապնդելու համար համառ աշխատանք կատարելով՝ մահացու հարված կհասցնենք կուլակությանը:

Զորահավաքի պետք է յենթարկել վոչ միայն բատրակային ակտիվին, այլև ամբողջ բատրակությանն ու հովիվ-տավարածներին, վորպեսզի այդ մասսաները ակտիվ մասնակցություն ցույց տան ապակուլակացման գործում: Այս աշխատանքի ընթացքում պետք է յուրաքանչյուր բատրակին ու բատրակուհուն բացատրել, վոր խոսքը կուլակի հարստությունը նրանց բաժանե-

րու մասին չէ, այլ կուլակներից խլված արտադրական միջոցները կոլտնտեսության միջոցով հանրայնացնելու մասին է:

Եթե խնդիրն այլ կերպ դրվեր՝ բատրակներին կոլտնտեսության շարժման շուրջը չհամախմբելով՝ այդ դեպքում կստեղծվեյին չքավորական կոմիտեների ժամանակաշրջանում եղած տրամադրությունները— «բաժանել, սեփականացնել», իսկ դա իր հերթին կթուլացներ գյուղի սոցիալիստական վերակառուցման, համատարած կոլեկտիվացման համար բատրակության մղած պայքարը:

Գործնականում, համատարած կոլեկտիվացման միջոցով իրականացնելով գյուղի սոցիալիստական վերակառուցումը՝ բատրակությունը պետք է հանդիսանա կուսակցության և Խորհրդային Իշխանության քաղաքականության անցկացնողը:

«Բայց այս խնդիրն իրագործելու համար պետք է բաց կուլում․ խորտակել կուլակի դիմադրությունը և զրկել նրան իր գոյության ու զարգացման արտադրական աղբյուրներից (հողից ազատ օգտվելուց, արտադրության գործիքներից, վարձակալությունից, բանվորներ վարձելու իրավունքից և այլն» (Ստալին):

Այս բոլոր խնդիրների իրագործումը հանդիսանում է հենց իրեն՝ բատրակության դասակարգային շահերի լավագույն պաշտպանությունը, ապահովելով նրան սոցիալիստական տնտեսություն կառուցող դարձնելու գործը (կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, անտառային տնտեսությունների արդյունաբերության մեջ):

Միության հիմնական խնդիրն այդ շրջաններում

այսպիսով հանդիսանում է բատրակային մասսաների զորահավաքը՝ կոլտնտեսությունները կազմակերպելու, ամրապնդելու և կուլակին, վորպես դասակարգ, վերացնելու աշխատանքին ակտիվ մասնակցություն ցույց տալու համար։

Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է, վոր Միությունը բատրակների մեջ ուժեղացնի մասսայական քաղաքական-բացատրական աշխատանքը, բոլոր շրջաններում, գյուղերում և ավաններում բատրակների ու բատրակուհիների հավաք կազմակերպի՝ յեկվոր բատրակներին պարտադիր կերպով մասնակից դարձնելով բոլոր բատրակային ժողովներին։

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԳՈՐԾԵՆՔ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ՝ ԱՊԱԿՈՒԼԱԿԱՑՈՒՄԸ

Նշելով Խորհրդային Իշխանության մարմինների— խորհուրդների— բացառիկ դերը համատարած կոլեկտիվացում անցկացնելու և այդ հիմունքով ապակուլակացման վերաբերմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու խնդրում՝ Միության կենտկոմն առաջադրում է յուրաքանչյուր գյուղական բանվորական կոմիտեյին հետևյալ գործնական խնդիրները.

1. Համախմբել խորհուրդների շուրջը հովիվ-ստավարածներին և բատրակային մասսաներին՝ համատարած կոլեկտիվացում անցկացնելու և կուլակությունը, վորպես դասակարգ, վերացնելու համար. անհապաղ յուրաքանչյուր գյուղխորհրդին կից կազմակերպել բատրակա-չքավորական խմբակներ։

2. Ապահովել գյուղխորհուրդներում գյուղատնտե-

տական պրոլետարիատի և չքավորության ղեկավար դերի ամրապնդման ազդեցությունը:

3. Օգտագործել բատրակության կոլեկտիվացման գործին օգնելու համար բատրակ-չքավորական ֆոնդերի 75 տոկոսից ոչ պակաս:

4. Կազմակերպել բատրակային մասսաներին՝ բատրակ-չքավորական խմբակների հետ միասին խորհուրդների միջոցով գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցումն ուժեղացնելու և համատարած կոլեկտիվացումն արագացնելու համար. պահանջել, որ կազմակերպված ձևով խորհուրդների միջոցով կոլտնտեսություններին հանձնվեն կուլակների հետևյալ իրերը՝

ա) Ինվենտարը, քաշող ուժերը, անասունը, անասունների կերերը, սերմերը և կուլակային տնտեսությունների այլ գույքերը, այդ գույքերը մտցնելով կոլտնտեսության մեջ, որպես բատրակների անբաժանելի ֆոնդ:

բ) Կուլակների տներ դրանցում բատրակային հանրակացարաններ, բատրակի տներ և այլ կուլտուրական հաստատություններ կազմակերպելու համար:

գ) Կուլակների փայերը բոլոր տեսակի կոոպերացիայում, նույնպես և ավանդները՝ գյուղատնտեսական վարկային ընկերությունների մոտ. այդ գումարները դարձնելով բատրակության և չքավորության կոլեկտիվացման ֆոնդ:

Այս բոլոր պահանջները բատրակությունը կազմակերպված ձևով պատրաստում է և առաջադրում. ինչպես խորհրդային մարմինների կողմից կուլակների գույքը գրավելիս, նույնպես և խորհուրդներում այդ



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

խնդիրները քննելիս մասսայական նախաձեռնության յերևան բերելու միջոցով։ Այս կերպով կազմակերպված բատրակությունը պետք է գործնականում անցնի չքավոր-միջակային մասսաների գլուխը՝ գյուղում չահագործման բոլոր ձևերը վերջնականապես արմատախիլ անելու համար մղվող պայքարի ընթացքում։

Գյուղական բանվորական կոմիտեն գումարում է բատրակների և բատրակուհիների, դրանց թվում նաև յեկվորների հատուկ ընդհանուր ժողովներ՝ այդ բոլոր հարցերը քննելու համար։

Նա ակտիվի հետ միասին մասնակցում է բատրակչքավորական ժողովներին, լավագույն, հասարակականորեն ստուգված և դասակարգային պայքարում կոփված բատրակներին ու բատրակուհիներին ուղարկում կուլակային գույքերը հաշվի առնող հանձնաժողովների աշխատանքները կատարելու։

Նա անհաշտ կռիվ է մղում կուսակցության և Խորհրդային Իշխանության քաղաքականությունն աղավաղելու դեմ՝ գյուղխորհուրդների և շրջգործկոմների աշխատանքի ընթացքում, համարձակ պայքարում է այդ օրգաններում խցկված կուլակներին, յենթակուլակներին և պրոլետարական գործին անհարազատ անձնավորություններին մաքրելու համար։

Կազմակերպված բատրակությունն այս բոլորը կենսագործում է չքավորության հետ միասին, միջակների հետ դաշնակցած, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

## ԿՈՐԶԻ ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*Միության անմիջական խնդիրն է՝ համատարած կոլեկտիվացման շրջաններում բատրակության շահագործումը լիովին վոչնչացնելու և բատրակի աշխատանքը վերջնականապես վերացնելու համար պայքար մղելը։*

*Միութենական կենտկոմի պլենումը գտնում է, վոր այդ շրջաններում հողի վարձակալության թույլտվության և գյուղական անհատական տնտեսություններում վարձու աշխատանք գործադրելու վերաբերյալ օրենքները պետք է այսուհետև կորցնեն իրենց ուժը։*

*Այսպիսի պայմաններում վերանում են բատրակության աշխատանքի պաշտպանության օրենսդրական նորմաների, աշխատանքային պայմանագրերի, բոյկոտների և գործադուլների ձևերը միության կողմից, վորպես բատրակության շահերի պաշտպանության միջոցի հարցը։*

*Միությունը և խորհուրդները համատարած կոլեկտիվացման շրջաններում վճռական պայքար են մղում բատրակների բոլոր տեսակի վարձման դեմ։*

*Համատարած կոլեկտիվացման շրջաններում անհատական տնտեսությունը վարձու աշխատանք գործադրելիս, դրանով հենց, վորպես կանոն, իրեն հակադրում է մասսայական կոլեկտիվացման, յերևան է բերում իր շահագործողական ձգտումները կամ կուլակային բնույթը։*

*Միությունը համատարած կոլեկտիվացման շր-*

ջաններում բատրակության միջոցով աշխատանք և տանում հետևյալ լոզունգներով.

Բատրակնե՛ր, կազմակերպվա՛ծ և ակտի՛վ կերպով մասնակցեցեք կոլտնտեսական շինարարությանը և կուլակին, վորպես դասակարգ, վերացնելու գործում:

Բատրակնե՛ր և բատրակուհինե՛ր, մտե՛ք կոլտնտեսությունները, դարձե՛ք խորհրդային տնտեսությունների, անասնային արդյունաբերական տնտեսությունների և գյուղական արդյունաբերական ձեռնարկությունների մշտական բանվորական կադրեր:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ՎՈՉ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

(Համախմբենք բատրակությանը միութենական պայմանագրերի կամպանիայի շուրջը)

Պլենումը գտնում է, վոր այն շրջաններում, վորտեղ դեռ համատարած կոլեկտիվացում չկա, անհատական տնտեսությունների և գյուղական հասարակությունների մեջ դեռ կգործադրվի բատրակային ու հովվական աշխատանքը, քանի վոր Հյուսիսային Կովկասը, միջին և ստորին Պովոլժիեն և Ուկրաինայի դաշտի մասն արդեն անցել են համատարած կոլեկտիվացման, ուրեմն և բատրակային աշխատանքը վարձելու համեմատաբար ավելի տարածված շրջանները առաջիկայում կլինեն Միջին Ասիայի, Անդրկովկասի, Հյուսիս-Արևելքի և այլ մարզերն ու հանրապետությունների շրջանները:

Միության համար ներկա մոմենտում առանձնապես կարևոր է իր ամբողջ ուժերը կենտրոնացնել աշ-

գային արևելյան, դրանց թվում նաև—անասնապահա-
կան շրջաններում՝ բատրակության մինչև իր ամբողջ
աշխատանքն ուժեղացնելու համար: Անհրաժեշտ է
վճռական պայքար մղել բատրակության և չքավորու-
թյան շահագործման բոլոր թաքուն և ճորտական ձե-
վերի դեմ, դրանց թվում նաև չայիրքարության,
ռանչպարության, ազգակցական հարաբերությունների
անվան տակ շահագործման և այլ նման երևույթների
դեմ: այս աշխատանքի ընթացքում միությունն առա-
վելապես հատուկ ուշադրություն պետք է դարձնի
այլ շրջաններում բատրակուհիներին ազատագրելու
համար մղվող պայքարի վրա:

Այս հանգամանքը պահանջում է, որ Միությունն
իր աշխատանքների ընթացքում տարբեր մոտեցում ու-
նենա ոչ միայն առանձին հանրապետություններին և
մարզերին, այլև նրանց առանձին շրջաններին (բամբա-
կագործական, այգեգործական, ծխախոտագործական,
ոչ հացահատիկային, անասնապահական և այլն)
բատրակության շահերի պաշտպանության ընթացքում:

Պլենումը ոչ համատարած կոլեկտիվացման շր-
ջանների բոլոր միութենական օրգանների ուշադրու-
թյունն է հրավիրում, որ անհրաժեշտ է և կարելի
յուրաժամանակ և մանրակրկիտ ձևով նախապատ-
րաստել ընթացիկ տարում աշխատանքային պայմա-
նագրերի կնքման կամպանիային անցնելու համար:
1930 թ. անհատական տնտեսությունների և գյուղա-
կան հասարակությունների մեջ մի քանի հարյուր հա-
զար վարձու բատրակներ, բատրակուհիներ և հովիվ-
տավարածներ դեռ գրավված կլինեն (ոչ համատարած
շրջաններում):

Միությունը պետք է այդ շրջաններում ամենամարտական դիրքեր բռնի գյուղի կապիտալիստական տարրերի շահագործումը սահմանափակելու և նրանց չեզոքացնելու համար: Եթե համատարած կոլեկտիվացման շրջանում միությունը կռվում է բատրակ վարձելու դեմ, ապա այն շրջաններում, որտեղ վարձու աշխատանքը չի արգելված, միությունը կազմակերպում է բատրակներին միության կողմից վարձվողներին առաջադրված պահանջների շուրջը, իրենց շահերը պաշտպանելու համար:

Պլենումը նշում է, որ բատրակության միութենական և պետական պաշտպանության ներկա վիճակն այդ շրջաններում շատ հեռու է կուլակի վրա վճռական հարձակման քաղաքականության համապատասխան լուծում տալուց (ժամանակավոր կանոնների տարածումը կուլակների վրա և այլն):

Միութենական մարմինների կողմից կուլակի վրա հարձակվելու թուլության հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում պրոֆակտիվի մասնակի, իսկ մի քանի շրջաններում, օրինակ, արևելյան մարզերում՝ զգալի աղտոտումը օտար և աջ օպորտունիստական տարրերով, որի հետևանքով, այդ մարմիններն անընդունակ են զորահավաքի ենթարկելու բատրակության ակտիվությունը՝ կուլակի դեմ պայքարելու համար:

Անցյալ տարվա գործադուլներն ու բատրակների և բատրակուհիների կողմից բատրակային տերերի դեմ ուղղված նամակները վկայում են, որ տեղական ըստորին ակտիվի և մինչև անգամ ղեկավար ակտիվի մի մասի մեջ բատրակության այդ կեղծ կազմակերպիչների թիվը քիչ չէ:

Միության միջոցով վարձողներին ավելի բարձր պահանջներ առաջադրելով բատրակությունը և հովիվ-տավարածներին կուլակի դեմ կռվելու համար զորահավաքի յենթարկելու փոխարեն, իրենց մասսաների կազմակերպված գործողություններով (բոյկոտ, գործադուլ և այլն) բատրակների շահերը պաշտպանելու փոխարեն, նրանք վիժեցնում են բատրակների և բատրակուհիների ակտիվությունը, իրենց դասակարգային շահերը պաշտպանելիս։

Պլենումը անհրաժեշտ է գտնում, վոր բոլոր այդպիսի դեպքերում անհապաղ վերընտրվեն գյուղական բանվորական կոմիտեները և կոչ է անում բատրակությանը, վոր նրանք վստահեն միայն այն առաջավոր բատրակներին ու բատրակուհիներին, վորոնք ապացուցել են իրենց կայունությունն ու անձնվիրությունը բատրակության դասակարգային շահերը պաշտպանելիս և կուլակի դեմ վճռական պայքար մղելիս։

Պլենումը գտնում է, վոր վոչ բավարար չափով ճշտորոշ (ու մի շարք դեպքերում բացահայտ անճիշտ) դասակարգային գիծը, վոր արտահայտվում է հանրապետական, յերկրային և մարզային գործկոմների կողմից, այն տնտեսությունների հատկանիշների մասին կայացված վորոշումների մեջ, վորոնք յենթակա յեն ընդհանուր աշխատանքային որենսդրության. դա և եյական կերպով արգելք է հանդիսանում և խանգարում միության կողմից կուլակության վրա կազմակերպված հարձակում գործելով։

Այդ շրջաններում միությունը դեռ չի դնում գյուղացիական անհատական տնտեսությունների մեջ վարձու աշխատանք գործադրելն արգելելու հարցը և հենց

այդ պատճառով էլ նրա առաջ դրված է բատրակության աշխատանքի պաշտպանության գործը ամեն կերպ ուժեղացնելու խնդիրը՝ աշխատանքային պայմանագրերի, բոյկոտի, գործադուլի· աշխատանքային օրենսդրության և միութենական ու պետական պաշտպանության այլ միջոցներով:

## ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋ ՇԱՐԺԵՆՔ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Կուլակ վարձողներին առաջադրված պահանջների (8-ժամյա աշխատանքի օր, բարձր աշխատավարձ, պարտադիր ապահովագրություն և այլն) շուրջ բատրակներին համախմբելու միութենական աշխատանքը՝ հենց իրեն՝ բատրակության ակտիվությամբ պաշտպանված (բոյկոտ, գործադուլ), դա պիտի այդ շրջաններում հանդիսանա բատրակային մասսաների դասակարգային պայքարի նախապատրաստման դպրոցը՝ կուլակին, որպես դասակարգ, վերջ տալու համար պայքարելու գործում (այդ շրջաններում համատարած կոլեկտիվացման անցնելու հիմունքով):

Միությունը պետք է բոլոր միջոցները գործադրի այդ շրջաններում բատրակներին և բատրակուհիներին կոլտնտեսությունների մեջ ներգրավելու ուղղությամբ, որպեսզի բատրակությունը կոլտնտեսական շինարարության ակտիվ մասնակցելով ազդակ հանդիսանա հետամնաց շրջաններն արագությամբ համատարած կոլեկտիվացման անցկացնելու համար:

Ահա ինչո՞ւ բատրակային աշխատանքի այդ չափերով գործադրման վայրերում վարձող կուլակների հետ յեղած ընդհարումները միությունը պետք է հնա-

բոլոր յեղած դեպքում դասակարգային պայքարի բարձրագույն աստիճանին հասցնի՝ ձգտելով, որ այդ դեպքերում կուլակային տնտեսությունները վերացվեն և կոլտնտեսությունները կամ խորհրդային տնտեսությունները կազմակերպվեն (օրինակ՝ գործադուլները Ոդեսայի, Կիեվի և այլն բանջարանոցներում)։

Այն բոլոր դեպքերում, յերբ վարձողը ծախծխում, փչացնում է իր անասունը, անկանոն է օգտագործում հողն ու արտադրական միջոցները, կազմակերպված բատրակությունը պետք է իր վրա վերցնի իշխանության մարմինների միջոցով անմիջապես վերջ տալով ամեն տեսակ նման վնասարարության։

Պլենումը կարծում է, որ այդ շրջաններում աշխատանքի պայմանագրեր կնքելու զանգվածային կամպանիայի մասսայական ծավալումը կարող է և պետք է հանդիսանա բատրակության ակտիվությունը միության, կուսակցության և խորհուրդների շուրջը համախմբելու միջոցներից մեկը, ըստ որում այդ միջոցով կարելի կլինի զորահավաքի յենթարկել բատրակության ամենից հետ ընկած խավերն անգամ։

Կազմակերպված բոյկոտը, գործադուլը, աշխպայմանագրերի կնքումը այդ շրջաններում բատրակության շահերը պաշտպանելու այլ միջոցների թվում կունենան խոշոր գործնական և քաղաքական նշանակություն։

Միութենական մարմինները պետք է միջոցներ ձեռք առնեն, որ բոլոր բատրակներն ու բատրակուհիներն ընդգրկվեն լիկկայաններում, ներգրավվեն սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայում և

ակտիվ մասնակցություն ունենան գյուղի հասարակական կյանքում:

Միութենական մարմինները, գյուղական բանվորական կոմխմբերից սկսած, պետք է ամենից առաջ վերականգնեն իրենց աշխատանքը, վորպեսզի ավելի սերտ կապվեն բատրակային մասսաների հետ, բատրակների և բատրակուհիների շահերն ավելի լավ պաշտպանեն, իրենց աշխատանքի ընթացքում հենվեն լայն կամավորական ակտիվի վրա և այլն:

## ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԱՇԽՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Այդ շրջանում գյուղական բանվորական յուրաքանչյուր կոմխմբի առջև ներկա մոմենտում հետևյալ գործնական խնդիրներն են դրվում՝

1. Անհապաղ ստուգել բոլոր գործող պայմանագրերն առաջին հերթին կուլակային և ունևոր տնտեսություններում:

2. Հաշվի առնել բատրակության և հովիվ-տավարածների վարձման չափերը:

3. Անհապաղ նախապատրաստվել տեղական և յեկվոր բատրակներին սպասարկելու:

4. Բատրակության և հովվության ընդհանուր ժողովներ, շրջանային կոնֆերանսներ ամենուրեք գումարելու միջոցով կազմակերպել բատրակությունը միության կողմից վարձողներին առաջադրած պահանջների շուրջը:

5. Նախապատրաստել բոյկոտի և գործադուլի հատկապես այն վայրերում, վորտեղ բատրակներ ու հովիվ-տավարածներ շատ կան:

6. Բոլոր գյուղխորհուրդներում բատրակա-չքավորական խմբակներ կազմակերպել, վորպեսզի այդ խմբակներն ոգնեն բատրակներին ու հովիվ-տավարածներին աշխատանքի պայմանները բարելավելու համար մղած պայքարի ընթացքում:

7. Գյուղական բանվորական կոմիտեների միջոցով բատրակներին ու հովիվ-տավարածներին ծանոթացնել իրենց աշխատանքի պաշտպանության վերա, երյալ պետական որենքներին և հրահանգներին:

8. Բատրակներից բրիգադներ կազմակերպել աշխատանքային պայմանագրերի կիրառումն ստուգելու և ամենախիստ պատասխանատվության յենթարկելու, մինչև անգամ արտադրության միջոցների բռնագրավման պահանջ դնելու այն անձանց վերաբերմամբ, վորոնք մեղադրվում են աշխատանքային որենքները սիստեմատիկաբար խախտելու, ճորտական շահագործման մեջ և այլն:

9. Աշխատել, վոր արգելվի բատրակներին, հովիվ-տավարածներին վարձողների կողմից հերթով հացտալը և անցյալի բոլոր այլ մնացորդները, վորոնք դեռ գոյություն ունեն հովիվ-տավարածների աշխատանքի պայմաններում: Նույնպես պետք է արգելել յերեխաներին աշխատեցնելը:

10. Լիկկայանների և անգրագիտության աշխատանքները կազմակերպել այն ձևով, վոր հարմարվի բատրակների ու հովիվ-տավարածների աշխատանքների պայմաններին և կենցաղին:

11. Այն վայրերում, վորտեղ մեծ չափերով բատրակություն է հավաքվում, անհապաղ ձեռնարկել խորհրդային մարմինների ոգնությամբ բատրակի տը-

ներ, հանրակացարաններ և կուլտուրական վայրեր կազմակերպելու գործին:

12. Գործնական միջոցներ ձեռք առնել բատրակության կոլտնտեսությունների մեջ ներգրավելու համար: Կապվել մոտակա խորհրդային տնտեսությունների և անտառային տնտեսությունների բանվորական կոմիտեների հետ՝ այդ տնտեսություններում բատրակներին աշխատանքի ուղարկելու համար:

13. Հնարավորության սահմաններում բատրակներից ու բատրակուհիներից մեծ թվով ուղարկել խորհրդային տնտեսությունների, անտառարդյունաբերական տնտեսությունների, կոլտնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների և այլ տրակտորային ու տեխնիկական դասընթացները:

14. Ընդհանուր ժողովներում թեկնածուներ առաջ քաշելու միջոցով կազմակերպել բատրակներին ու բատրակուհիներին բանֆակները և այլ տեսակի կուրսերն ուղարկելու համար:

## ԱՆՈՂՈՔ ՊԱՅՔԱՐ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻԾՆ ԱՂԱՎԱՂՈՂ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՄ

Միության մարմիններն աշխատանքի պայմանագրեր կնքելու կամպանիային նախապատրաստվելիս, պետք է ի նկատի ունենան, որ հենց միության բատրակային աշխատանքում խոշոր անհաջողություններ տեղի ունեցան (Ցկատերինովկայի, Միջին Վոլգայի, Վոլոգդայի, Նիժնի-Նովգորոդի, Մոսկվայի, Լենինգրադի, Ղըրիմի և մի շարք այլ շրջաններում):

Պլենումը գտնում է, որ գյուղում դասակարգային պայքարի սրման պայմաններում, առանձնապես

յերբ կոլտնտեսության շարժման մեջ արդեն մասնակցում են բատրակության, չքավորության և միջակների միլիոնավոր մասսաները, յուրաքանչյուր հանրապետական, յերկրային ու մարզային կազմակերպության աշխատանքի ղեկավարության խորտակման ցուցանիշ կհանդիսանա կրկնությունն այն բոլոր յերևույթների, վորոնք տեղի յեն ունեցել Յեկատերինովկայում:

Միութենական այն մարմինները, վորոնք այդպիսի թարախոտ խոցերի հնարավորության թույլ կտան և իր ժամանակին միջոցներ ձեռք չեն առնի այդ խոցերը բացելու և բժշկելու համար, նրանք դրանով հենց յերևան կբերեն իրենց վողջ անընդունակությունը կուսակցության դեմ տարվող պայքարի՝ բատրակության կազմակերպման գործը ղեկավարելու ընթացքում:

Պլենումը նշում է, վոր բատրակության շահերի պաշտպանությունը չափազանց թույլ է աշխատավորական տիպի տնտեսություններում, վոր գյուղական բանվորական կոմիտեների, գյուղատնտեսական տեսչությունների և դատական մարմինների մեծամասնությունն իրենց աշխատանքների ընթացքում հաշտվողական դիրք են բռնում այդ տնտեսությունների վերաբերմամբ, չնայած այն հանգամանքին, վոր նրանց մեջ, հատկապես արևելյան ազգային շրջաններում, բատրակության ճորտատիրական շահագործման խայտառակ փաստեր են նկատվում:

Պլենումն առաջարկում է միութենական բոլոր մարմիններին դասակարգային ճշտորոշ գիծ տանել բոլոր տնտեսությունների մեջ բատրակության շահերը պաշտպանելիս և ղեկավարվել հետևյալով:

Եթե բոլոր կապիտալիստական և կիսակապիտալիստական տնտեսություններում (կուլակային և ունևոր) մուժիկը վարձողների մեծ պահանջներ է առաջադրում, ապա աշխատավորական տիպի տնտեսություններում մուժիկը պայքար է մղում «ժամանակավոր կանոնները» խախտելու համար ու դրա հիման վրա վարձողների այդ խմբին լրացուցիչ պայմաններ է առաջադրում՝ դրանցում աշխատող բատրակության և հովվության դրությունը բարելավելու վերաբերմամբ։

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻԾԸ ԽՍՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատելով, որ համատարած կոլեկտիվացման դեռ չենթարկված շրջաններում գյուղի կապիտալիստական տարրերի շահագործումը սահմանափակելու և դուրս քշելու սիստեմում աշխատանքի պայմանները բարելավելու համար բատրակության կազմակերպված պայքարի հետ միասին վոչ պակաս նշանակություն ունի նաև դատարանը, պետական հսկողությունը, (Աշխատանքի Տեսչությունը) և աշխատանքային որենսդրությունը՝ Պլենումն անհրաժեշտ է գտնում հետևյալը.

1. Անհապաղ վերանայել աշխատանքային ընդհանուր որենսդրության յենթակա տնտեսությունների նշանների մասին բոլոր հանրապետական և այլ մարմինների կայացրած վորոշումները, վորպեսզի «ժամանակավոր կանոնները» կիրառվեն միմիայն աշխատավորական տիպի տնտեսությունների վերաբերմամբ, վորտեղ վարձու աշխատանքը հատկապես ոժանդակ բնույթ է կրում։

2. *Ամենայն խստությամբ բոլոր կապիտալիստական և կիսակապիտալիստական տնտեսություններում (կուլակ և ունևոր) կիրառել աշխատանքի օրենսգիրքը, այդ տնտեսությունների վերաբերմամբ պահպանելով միմիայն ժողկոմխորհի փետրվարի 20-ի վորոշման այն մասը, վոր ուժեղացնում է քաղաքային աշխատանքի պաշտպանությունն այդ տնտեսություններում (գրավոր պայմանագրերի կնքումը պարտադիր լինելը, սեզոնային աշխատանքների և այլ ժամանակավոր բանվորների վերաբերյալ օրենքը):*

3. *Հովիվ-տավարածների վերաբերմամբ գործող հրահանգի փոխարեն հրատարակել հատուկ վորոշում՝ աշխատանքի ընդհանուր օրենսդրության հիման վրա (հացը վարձողից կամ վարձողներից հերթով տալն ամենուրեք պարտադիր կերպով արգելել):*

4. *Վարձողների բոլոր կատեգորիաների համար պարտադիր դարձնել, վոր նրանք պարտադիր կերպով պայմանագիր կնքեն Միության միջոցով:*

5. *Հատուկ վորոշումներ հրատարակել օրավարձով, գործարքով աշխատող (առանձնապես բամբակի, ծխախոտի և այլ պլանտացիաներում) բանվորների աշխատանքի պաշտպանության մասին:*

6. *Շտապեցնել սոցիալական ապահովագրության Միության խորհրդի կողմից ընդունված այն վորոշման պարտավորությունը, վորը վերաբերում է բատրակության, նույնպես և բոլոր խմբի վարձող տնտեսությունների մեջ աշխատող բատրակությանը պարտադիր կերպով սոցիալական ապահովագրության յենթարկելու համար:*

7. *Վերացնել վարձողների վորոշ կարգի (գյուղա-*

կան տնայնագործների) վերաբերմամբ յեղած աշխատանքի որենքները խախտելու, ճորտական շահագործությունները:

8. Ամենուրեք արգելել յերեխաների աշխատանքի շահագործումը:

9. Գյուղաշխատեսչության և դատարանի միջոցով ուժեղացնել պատժելու քաղաքականությունը Աշխատանքի որենքները խախտելու, ճորտական շահագործման, պայմանագրի բացակայության կամ ճորտական պայմանագրեր կնքելու դեպքում: Աշխատանքի պայմանագրեր կնքելու կամպանիայի առթիվ տալ Աշխժողկոմատի և ուրիշների գծով գործնական դիրեկտիվներ և պահանջել Աշխժողկոմատից, Արդարադատության, Դատախազության մարմինների կողմից բատրակների շահերի պաշտպանության վերաբերյալ դասակարգային ճշտորոշ գիծ անցկացնելու վերաբերյալ աշխատանքները:

10. Աշխժողկոմատը պետք է ընդլայնի գյուղատնտեսական տեսչության շտատները և բարելավի նրա աշխատանքն այն շրջաններում, վորտեղ բատրակային աշխատանքը գործադրելը և մասսայական բնույթ է կրում: Պարտադիր կերպով պետք է բոլոր գյուղխորհուրդները աշխատանքի որեքները փակցնեն իրենց պատերին և այդ որենքները պետք է թարգմանեն բոլոր լեզուններով, վորպեսզի բատրակությունն ու բանվորությունը ծանոթանա այդ որենքներին:

11. Աշխատանքի որենսդրության համապատասխան ամեն կերպ պետք է ուժեղացնել խորհրդային մարմինների գործնական դերը գյուղական վայրերում բատրակության ու հովիվ-տավարածների շահերը պաշտպանելու գործում:

Պլենումը հանձնարարում է Կենտկոմի Նախագահությանն ամենակարճ ժամանակամիջոցում գործնական դիրեկտիվներ տալ ըստ առանձին հանրապետությունների և մարզերի աշխատանքի պայմանագրեր կնքելու գարնանային կամպանիան անցկացնելու վերաբերյալ՝ ՀԱՄԿԽ-ի առաջ շտապ կերպով հարց դնելով, վոր նա բանվորական բրիգադներ ուղարկի միության այդ աշխատանքի ընթացքում աջակցելու համար։ Առանձին ուշադրություն պետք է դարձվի այն շրջանների վրա, վորտեղ խոշոր չափով բատրակներ կան (բամբակի, ծխախոտի, անասնապահական զարգացած շրջանները։

Պլենումը գտնում է, վոր միության յուրաքանչյուր մարմին այդ շրջաններում պետք է իրեն գործնական խնդիր առաջադրի, վորպեսզի իր աշխատանքի ընթացքում չլինի՝

Վո՛չ մի բատրակ և բատրակուհի միության շարքերից դուրս․

Վո՛չ մի հովիվ—տավարած, բատրակ և գյուղատնտեսական որավարձ բանվոր առանց աշխատանքի պայմանագրի։

Անողոք պայքար ճորտական շահագործման բոլոր տեսակի ձևերի դեմ, վոչ մի ճորտական պայմանագիր։

Պլենումը գտնում է, վոր միութենական մարմինները այդ շրջաններում, աշխպայմանագրեր կնքելու կամպանիայի պատրաստվելիս պետք է հաշվի առնեն, վոր վարձողները, հատկապես կուլակները, ընթացիկ գյուղատնտեսական սեզոնում ել ավելի մեծ չափերով

անցնեն որավարձ և թաքուն ձևով բատրակներ ու բատրակուհիներ վարձելու:

Դա վոչ մի կերպ չի վերացնում բատրակության պաշտպանությունը կազմակերպելու խնդիրը, այլ դա ավելի բարդացնում ու ծանրացնում է աշխատապաշտպանության գործը գյուղական տնտեսություններում: Վարձողը, Հատկապես կուլակը, այդ բոլոր խորամանկությունները գյուղական բանվորական յուրաքանչյուր կամպանիայից մեծ համառությամբ և դասակարգային ուշադրությամբ են պահանջում գյուղատնտեսական բանվորների շահերը պաշտպանելու ընթացքում (գյուղական անհատական տնտեսություններում):

Պետք է պարտադիր կերպով հաշվի առնել, վոր շատ վարձողներ կփորձեն թաքնվել կոլտնտեսության ցուցանակի տակ, իրականում կեղծ կոլտնտեսություններ կազմակերպելով և բատրակային վարձու աշխատանք գործադրելով:

Կեղծ կոլտնտեսության բնորոշ նշանը չքավորության և բատրակության կոլտնտեսությունից դուրս չահագործումն է հանդիսանում՝ նրանց վարձելու, ինվենտար վարձով տալու և այլ միջոցներով, կամ բատրակության ու չքավորության կոլտնտեսության ներսում շահագործելն է հանդիսանում, կամ թե այս կամ այն միասին:

Կեղծ կոլտնտեսությունների դեմ Միությունն անհաշտ պայքար է մղում, այնպես, ինչպես կուլակների դեմ՝ բատրակների շահերի պաշտպանության անհրաժեշտ դեպքերում բոյկոտի և գործադուլի դիմելով: Միությունը աշխատում է խորհուրդների և կոլտնտեսությունների միջոցով լուծարքի յենթարկել բոլոր

կեղծ կոլտնտեսությունները, փոփոխել բաղադրությունը, չքավորությունը միջակների հետ միասին (վորոնց սկզբում կուլակը կարողացել եր խաբել) կազմակերպվեն իսկական հանրայնացված տնտեսություններ:

## ԲԱՏՐԱԿԱՅԻՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ԴԵՊԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կենտկոմի պլենումն ընդունում ե, վոր այն շրջաններում, վորտեղ դեռ համ. կոլեկտիվացում չկա, միութենական մարմինները՝ անհատական տնտեսությունների և գյուղական հասարակությունների մեջ բատրակների պաշտպանության աշխատանքն ուժեղացնելով՝ պետք ե ամեն կերպ ծավալեն աշխատանքը բատրակային մասսաների կոլտնտեսությունների մեջ ներգրավելու համար:

Միության յուրաքանչյուր մարմին աշխատելով, վոր իր գործունեության շրջանում չլինի վոչ մի կեղծ կոլտնտեսություն և բատրակային վարձու աշխատանք գործադրող կոլտնտեսություն, առանց բատրակ-չքավորական խմբակի վոչ մի կոլտնտեսություն, միենույն ժամանակ իրեն գործնականորեն պետք ե առաջադրի հետևյալ խնդիրները: Առավելագույն թվով բատրակներ ու բատրակուհիներ ներգրավել կոլտնտեսությունների մեջ:

Ապահովել կոլտնտեսության մեջ մտած բատրակների, բատրակուհիների և հովիվ—տավարածների ըսպասարկումը՝ նրանց սոցիալիստական հողագործության առաջնորդի և կազմակերպչի առաջավոր դիրքերում կանգնեցնելու համար:

Բանվորական կոմիտեների հետ միասին ապահովել, որ առաջին հերթին բատրակությունն ընդունի մշտական կամ սեզոնային աշխատանքի՝ խորհրդային և անտառա-արդյունաբերական տնտեսություններում:

Պլենումը գտնում է, որ միայն սոցիալիստական շինարարության ուղիներով բատրակությունն իր ծանր դրությունից դուրս գալու ելքը կգտնի: Բացատրել այդ բատրակային մասսաներին, զորահավաքի ենթարկել նրանց՝ սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից դարձնելու համար: Դա միության յուրաքանչյուր մարմնի և ակտիվի հիմնական խնդիրն է:

## ԾԱՎԱԼԵՆՔ ԲԱՏՐԱԿԱ-ՉՔԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Նշելով, որ բոլոր միութենական կազմակերպությունները դեռ անթույլատրելի կերպով թույլ են մասնակցում բատրակա-չքավորական խմբակների աշխատանքներին՝ Կենտրոնական Կոմիտեն գտնում է, որ այդ խմբակների կազմակերպման գործը պետք է յուրաքանչյուր միութենական մարմնի գործնական ու կարևորագույն աշխատանքը դառնա: Դա առանձնապես վերաբերում է գյուղական-բանվորական կոմիտեներին, կազմակերպիչներին և հրահանգիչներին:

Միութենական օրգանները պետք է բատրակային ակտիվին լայն բացատրեն բատրակա-չքավորական խմբակների նշանակությունը, նրանց խնդիրները համատարած կոլեկտիվացման շրջաններում՝ ապակուլակացման ձեռնարկումների և կոլտնտեսական շարժումն ամրապնդելու աշխատանքների մեջ:

Կազմակերպված բատրակությունը պետք է ամե-

նուրեք գյուղխորհուրդներին, կոոպերացիայի ընտրական մարմիններին, ինչպես նաև կուսակցությունների վարչություններին կից բատրակա–չքավորական խմբակների կազմակերպման գործում նախաձեռնող հանդիսանա:

Բատրակա–չքավորական խմբակների ամբողջ աշխատանքը, կատարվելով Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ պետք է հենվի բատրակային մասսաների և չքավորության իսկական ակտիվի վրա:

Բատրակ-չքավորական խմբակները միութենական ակտիվի հետ միասին խորհուրդների, կուսակցությունների, կոոպերացիայի և այլ աշխատանքների շուրջը պիտի համախմբեն բատրակա–չքավորական մասսաներին:

Բատրակա–չքավորական խմբակներն ու գյուղական բանվորական կոմիտեները համատարած կոլեկտիվացման շրջաններում միահամուռ աշխատանք են ծավալում կուսակցական շինարարության հարցերի շուրջը: Իսկ վոչ համատարած շրջաններում նրանք այդ աշխատանքը ծավալում են աշխպայմանագրեր կնքելու, արտադրական կոոպերացման, անտառանյութերի մթերման հարցերի շուրջը: Իսկ բոլոր շրջանների համար ընդհանուր խնդիրներ են հանդիսանում՝ գյուղխորհուրդների ամրապնդումը, սերֆոնդերի կազմակերպումը, բատրակային հանրակացարանների և կուլտուրական հաստատությունների հիմնումը, անգրագիտության վերացումը, սպառողական կոոպերացիայի աշխատանքների բարելավումը և այլն:

Պլենումը նշում է բատրակա–չքավորական խմբակների հատուկ նշանակությունը կուսակցությունների

մեջ, վորոնք գյուղական բանվորական կոմիտեների հետ միասին, պետք է պայքարեն արտադրության բոլոր միջոցները հանրայնացնելու, անբաժանելի ֆոնդերն ուժեղացնելու և կոլեկտիվացման բարձրագույն ձևերի (արտելներ, կոմունաներ) անցնելու համար:

Բատրակա-չքավորական խմբակները գյուղբանկոմների հետ միասին կուլակներին կոլտնտեսություններից դուրս շպրտելու համար մղվող պայքարի գլուխը պետք է անցնեն, նրանք պիտի հետևեն, վոր կուլակը կոլտնտեսություն մուտք չգործի, վոր կոլտնտեսության անդամները կանոնավոր վարձատրվեն ըստ աշխատանքի քանակի և վորակի, վոր կարիքավոր բատրակության ու չքավորության ոժանդակություն ցույց տրվի հասարակական, արտադրական ոգնության կարգով:

Այդ աշխատանքը հաջող տանելու համար անհրաժեշտ է, վոր գյուղբանկոմների և բատրակա-չքավորական խմբակների միջև սերտ կապ ստեղծվի, վորպեսզի բոլոր առաջավոր բատրակներն ու բատրակուհիները վոչ միայն կոմկուսակցության մեջ ներգրավվեն, այլ և ներգրավեն կոմյերիտմիության, խորհուրդների, կոոպերացիայի և այլ աշխատանքներում:

Պլենումը գտնում է, վոր բատրակա-չքավորական խմբակներն ու բանվորական կոմիտեները կոմյերիտմիության հետ միասին կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ պետք է զորահավաքի յենթարկեն բատրակությունն ու չքավորությունը՝ գյուղատնտեսական և անտառային տնտեսության վերակառուցման համար:

# ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Կազմակերպված բատրակությունը՝ գյուղբանվորների գլխավորությամբ գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցման համար իսկական պայքարող լինելով ձգտում է՝*

1. *Կազմակերպել խոշոր կոլտնտեսություններ, թույլ չտալ և դուրս շպրտել նրանց միջից կուլակներին, կոլտնտեսությունների մեջ մեծ չափերով բատրակների և բատրակուհիների ընդունել, դրանց թվում նաև նրանց, վորոնք վարձով աշխատում են կոլտնտեսություններում. կոլտնտեսական ղեկավար մարմինների մեջ ուժեղացնել բատրակների ու չքավորության ղեկավար դերը. կոլտնտեսության մեջ աշխատող բոլոր անդամներին կանոնավոր սպասարկել մասսայական և պրոֆմիութենական աշխատանքով:*

*Բոլոր բատրակներին ու բատրակուհիներին ծանոթացնել կոլտնտեսական կանոնադրության և կոմկուսակցության ու խորհրդային իշխանության այն հիմնական վորոշումներին, վորոնք վերաբերում են կոլտնտեսական շինարարության ու կուլակին, վորպես դասակարգ, վերացնելու խնդրին: Ուժեղացնել կոլտնտեսության մեջ կոմյերիտմիության և կուսակցության հասարակայնությունը, այնպես անել, վոր կոլտնտեսական ամբողջ մասսան ու հասարակայնությունը ուժեղ աջակցություն ցույց տան արդյունաբերական բանվոր կազմակերպիչներին բատրակության անգրագիտությունն ու կիսագրագիտությունը (տարրական, քաղաքական և ագրո-տեխնիկական) վերացնելու համար:*

2. Կոլտնտեսության արտադրական պլանն իրագործել (սերմ-ֆոնդեր կազմակերպել), ցանքերի տարածությունն ընդլայնել, կաթնատվությունն ու բերքատվությունը բարձրացնել և այլն)։ Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ աղբը և գոմխնխումը ամբողջովին իրագործել, ճշգրիտ կատարել պրոլետարական պետության հանդեպ ունեցած պարտավորությունները (մըթերումներ, կոնտրակտացիաներ, վարկերը յուր ժամանակին վերադարձնել, պետափոխատվությունների մասնակցություն ցույց տալ և այլն)։

Բոլոր կոլտնտեսությունների, նրա ակտիվի կողմից վճռական պայքար կազմակերպել առաջին հերթին գույքի և անասունի ամեն տեսակ ծախծխումների դեմ, այնպես անել, վոր կոլտնտեսության ակտիվը մասնակցի կոլտնտեսություններից դուրս յեկած կապիտալիստական տարրերի և բոլոր կեղծ կոլտնտեսությունների դեմ մղած պայքարին, հասարակական վերահսկողություն կազմակերպել չքավորության և բատրակության ֆոնդերը կանոնավոր ոգտագործելու վերաբերմամբ։

3. Տնտեսական բոլոր ճյուղերի արտադրական միջոցները լրիվ հանրայնացնել, անբաժանելի ֆոնդերը վորքան կարելի յե ավելացնել, խիստ հետեվել կոմունայի կամ արտելի կանոնադրության կատարման՝ արտադրության, աշխատանքի և բաշխման կազմակերպման շրջանում (գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության հիման վրա)։ Ձիա-մեքենայական կայաններ կազմակերպել և կոլտնտեսության մեջ յեղած գյուղատնտեսական ինվենտարն ու քաշող ուժերը կանոնավոր ոգտագործել, իսկ յեթե տրակտորներ կան, նույնպես վարվել նաև բարդ մեքենաների հետ, կոլտըն-

տեսության մեջ արտադրության այդ միջոցների ոգտագործումը խնամքով վերաբերվել:

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել, աշխղխացխալլինան ամրացնել և աշխատել, վոր կոլտնտեսությունը սոցմրցման մեջ մտնի այլ կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների հետ (ո՞վ ավելի լավ կցանի, ո՞վ ավելի շատ ինքնարժեքը կիջեցնի, ո՞վ ավելի ապրանքայնություն կունենա և այլն):

Հարվածայինների բրիգադներ կազմակերպել, հետևել նրանց կարգ ու կանոնների կատարմանը, ակտիվորեն մասնակցել արտադրական խորհրդակցություններին, աշխատանքի վարձման ձևերի և կազմակերպման վերաբերյալ արդյունաբերական ձեռնարկությունների փորձը կոլտնտեսությունների մեջ ոգտագործել, մանավադ խորհրդային տնտեսությունների փորձը:

Մասնավորապես անցնել գործարքի նորմաների, վճարումներ կատարել՝ նայած կատարած աշխատանքի վորակին ու քանակին:

4. Հաղթահարել միջակին հատուկ մանր սեփականատիրական սովորությունները. հասարակական, արտադրական դաստիարակություն տալով նրան խոշոր տնտեսությանը ու, հնարավորության դեպքում, դարձնելով:

Մոտկա խորհրդային տնտեսության և կոլտնտեսության միջև արտադրական, հասարակական կապ ստեղծել՝ ղեկավար դերը հատկացնելով խորհրդային խոշոր տնտեսությանը, ու, հնարավորության դեպքում, համաձայնությամբ առաջ բերել խորհրդային տնտեսության ու կոլտնտեսության միացում, ինչպես և

ամրապնդել մոտակա ֆաբրիկայի, գործարանի հետ յեղած կապը, որ պրոլետարական ազդեցությունը կոլտնտեսական մասսայի վրա ամեն կերպ ուժեղանա:

Այնպես անել, որ խորհուրդները կոլտնտեսական շինարարության ամենօրյա ճշգրիտ ղեկավարություն ցույց տան և կոլտնտեսական հասարակությունն աջակցի գյուղխորհրդին, շրջգործկոմին այն բոլոր աշխատանքների ընթացքում, որոնք վերաբերում են գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցմանը և կատարվում են կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

## ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է.

Պլենումը գտնում է, որ կոլտնտեսություններում պրոլետարական ազդեցությունն ուժեղացնելու խնդիրը և այն գործնական խնդիրները, որոնք դրված են կազմակերպված բատրակության առջև կոլտնտեսական շինարարության ասպարեզում, նպատակահարմար են դարձնում կոլտնտեսություն մտած բատրակների ու բատրակուհիների միութենական անդամության պահպանումը:

Միության այն բատրակները, որոնք մտնում են կոլտնտեսության մեջ, միությանը տալիս են գյուղական կայուն անդամավճար և սպասարկվում են գյուղական բանվորական կոմիտեյի կողմից. կոլտնտեսություն մտած միության անդամների վերաբերմամբ հատուկ հաշվառում է տարվում:

Կոլտնտեսությունների մեջ չկազմակերպված բատրակներն ու բատրակուհիները միության մեջ ներգրա-

վելիս, պետք է միևնույն ժամանակ նրանց աշխատանք տրվի արհմիության ուղղությամբ, միության կանոնադրության հիմունքներով։

Գլենումը հանձնարարում է Նախագահությանը չասպ կարգով ՀԱՄԿԽ-ում առաջարկ մտցնել, որ Գյուղատնտես. միությունը սպասարկի բոլոր վոլոստյան բանվորներին, վորոնց թվում նաև նրանց, ովքեր աշխատում են կոլտնտեսության արդյունաբերական ձեռնարկություններում և մեքենա-տրակտորային կայաններում, այլ և այնտեղ աշխատող գյուղատնտեսական բոլոր մասնագետներին և ծառայողներին։

Դրա համապատասխան պետք է վերակազմվի միության սորքին ցանցը, վորպեսզի գյուղական բանվորական կոմիտեներ ստեղծվեն բոլոր խոշոր կոլտնտեսությունների կից։ Ցեթե կան մեքենա-տրակտորային կայաններ, վերջիններիս բանվորների վրա դրվում են մեքենա-տրակտորային կայանի գործունեության շրջանի կոլտնտեսության մեջ յեղած բոլոր միության անդամներին սպասարկելու պարտականությունները։

Մեքենա-տրակտորային կայանին կից կարելի յե կազմակերպել նաև շրջկոմներ (խորհրդային, կուսակցական և կոլտնտեսական խմբակային մարմինների կառուցվածքին համապատասխան)։ Այսպիսի դեպքերում կոլտնտեսությունների մեջ լիազորությունների ինստիտուտ է ստեղծվում (վորպես կանոն, ընտրովի—չվարձատրվող աշխատողներ)։

Գլենումը հանձնարարում է Նախագահությանը չասպ կարգով մշակել, թե ինչ կազմություն պետք է ունենան միութենական մարմինները համատարած կոլեկտիվացման շրջաններում, ընդհանուր առմամբ յել-

*ներով այդ շրջանների արհմիութենական աշխատանքն ուժեղացնելու անհրաժեշտությունից :*

*Համատարած կոլեկտիվացման շրջաններում գյուղբանկոմների աշխատանքն ուժեղացնելու և նրանց գործունեության անընդհատությունն ապահովելու համար, անհրաժեշտ է հետևյալը՝*

1․ *Հավաքած անդամավճարների վոչ պակաս քան* 75 *տոկոսը մնում է իրեն՝ բանկոմին՝ բատրակության միջև աշխատանքներ կատարելու համար :*

2․ *Տեղական միութենական մարմինների բյուջեյում հանրապետական, յերկրային, մարզային մասշտաբով՝ նյութական միջոցների վոչ պակաս քան* 3*-ից* 5 *տոկոսը վերցվում և հատկացվում է համատարած կոլեկտիվացման շրջաններում արհմիութենական աշխատանքն ուժեղացնելու և դրան աջակցելու նպատակին :*

## *ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ․*

### Անհապաղ կիրառելիք գործնական ձեռնարկումներ բատրակության կոլեկտիվացման ուղղությամբ ․

30 *թ․ ընթացքում վոչ պակաս, քան մեկ միլիոն բատրակ ու բատրակուհի կոլտնտեսությունների մեջ ներգրավելու վերաբերմամբ Միությունների Միության, Կոլխոզկենտրոնի և Կենտկոմի Նախագահության կողմից նշված ձեռնարկումներին հավանություն տալով՝ պլենումը գտնում է, վոր համատարած կոլեկտիվացման շրջաններում միությունը պետք է ձգտի տնտեսության սոցիալիստական հատվածի (կոլտնտեսություն, խորհրդային տնտեսություն) մեջ ներգրա-*

վելու նաև բոլոր յեկվոր և գործազուրկ բատրակներին ու բատրակուհիներին :

Այն դժվարագույն խնդրի իրագործմանը հսկայական նշանակություն տալով՝ պլենումը Միությունների Միության նախագահության և Կոլխոզկենտրոնի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր մինչև այժմ բատրակության կոլեկտիվացման աշխատանքը, վորպես կանոն, կատարվում է առանց տեղական կոոպերատիվ մարմինների ակտիվ մասնակցության, իսկ հաճախ նույնիսկ դրանք դեմ են գնում այդ աշխատանքին :

Բատրակության կոլեկտիվացման աշխատանքները հաջող ծավալելու համար, պլենումն անհրաժեշտ է համարում .

1 · Բոլոր բատրակային ժողովներում (կոլտնտեսության մեջ մտած և չմտած բատրակների ու բատրակուհիների) քննության առնել և մշակել գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը : Այս աշխատանքին պետք է մասնակից դարձնել միության ակտիվից բացի նաև կոոպերատիվ հրահանգչին ու ակտիվին :

2 · Բոլոր կոոպերատիվ մարմիններին, սրանց թվում նաև բոլոր կոլտնտեսության վարչություններին պարտավորեցնել, վոր անհապաղ ձեռնամուխ լինեն բատրակության ու չքավորության կոլեկտիվացման համար՝ ֆոնդերի, բնակելի տների և համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակներից բռնագրավված արտադրական ու այլ միջոցների գործնական օգտագործման աշխատանքներին :

3 · Առօրյա կազմակերպված օգնություն ցույց տալ կոլտնտեսության մեջ մտած այն բատրակներին ու

քաղաքակուհիներին, վորոնք վոչ մի տնտեսություն, բընակարան և ապրուստի միջոց չունեն (որինակ՝ ավանսով աշխատավարձ տալը, առաջին հերթին նրանց ուղարկել վճարովի աշխատանքի կոլտնտեսություն ներսում և գրում, վարկավորում ի հաշիվ աշխատավարձի ապառկոոպերացիայի և ուրիշների միջոցով):

## ԿՌԻՎ ԱՆՀԱՐԱԶԱՏ · ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ՝ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ.

Պլենումը նշում է, վոր կոոպերատիվ և կոլտնտեսական ակտիվի մասի կողմից անտարբեր, իսկ հաճախ նույնիսկ թշնամական վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր են տեղի ունենում բատրակության կոլտնտեսության մեջ ներգրավելու վերաբերմամբ: Այդ բոլորը, նաև կոլտնտեսության ներսում դեպի բատրակն ու բատրակուհին յեղած հանցավոր վերաբերմունքի մասսայական փաստերը (որինակ՝ Կրասնի մելիորատոր», «Դեսյատ լետ օկտյաբրյա»-ն (վկայում են, վոր կոոպերացիայի և կոլտնտեսությունների ընտրական մարմինները աղտոտված են աջ ոպորտունիստական տարրերով (վորոնք իրենց կուլակների ձայնակիցներն են հանդիսանում), իսկ հաճախ՝ նաև կուլակներով:

Պլենումը կոչ է անում միութենական մարմիններին, ամբողջ կազմակերպված բատրակության՝ միության բոլոր անդամների աջակցությամբ դուրս շպրտել կոոպերատիվ կոլտնտեսության ակտիվի շարքերից բոլոր այն անձնավորություններին, վորոնք խանգարում են կոլտնտեսության շինարարության գործը:

Անհրաժեշտ է «Կրասնի մելիորատոր»-ի և «Դես-

յառ լեռ ակայարը»-ի (մորանք չերկար ժամանակ ղեկավարում էին կուլակները, իսկ նրանց օգնում է-յին կուսակցության քաղաքականության «աջակցող» ադրատանիխաները) օրինակներով բատրակության ու չքավորության լույն կերպով ծանոթացնել, թե ո՛ւր է տանում կոլտնտեսություններում բատրակության ու չքավորության անկազմակերպվածությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ բատրակության ու չքավորությունը միջակային մասսաների հետ միասին, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պետք է նախապատրաստեն ղեկավար և ընտրովի այլ աշխատանքների համար առաջ քաշելու ամենատաղանդավոր, կայուն և սոցիալիզմի գործին նվիրված կոլտնտեսականներին՝ հատուկ աջակցություն ցույց տալով կոլտնտեսությունները ամրացնելու համար ուղղված արդյունաբերական բանվորներին (25.000-ի հատուկ զորահավաքի կարգով):

## ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԳՅՈՒՂԿՈՈՊԵՐԱՑԻԱՆԵՐՈՒՄ:

Պլենումն առանձնապես կարևոր է համարում կոլեկտիվացման զարգացման տվյալ ժամանակամիջոցում այնպես անել, որ յուրաքանչյուր կոլտնտեսություն ուժեղ ու կայուն ղեկավարություն ունենա:

Չպետք է գոյություն ունենա ոչ մի կոլտնտեսություն առանց բատրակների և բատրակուհիների, առանց կուսբատրակային միջուկի:

Ահա, թե ինչու պլենումն աննպատակահարմար է գտնում ընթանալ հատուկ բատրակային կոլտնտեսություններ կազմակերպելու ուղիով և կոչ է անում բատ-

րակությանը կառուցել խոշոր կոլեկտիվ տնտեսու-թյուններ՝ չքավորության և միջակների հետ միասին:

Բատրակության նախաձեռնությամբ առանձին շըր-ջաններում կազմակերպված բատրակային կոլտնտե-սությունները պետք է ձուլվեն կոլտնտեսության ընդ-հանուր շարժման հետ ու դրանով հենց աջակցեն պրո-լետարական ազդեցության ամրացման կոլխոզներում:

Պլենումը հանձնարարում է Կենտկոմի նախագա-հության՝ Կոլտնտեսկենտրոնի նախագահության հետ միասին այնպիսի գործնական ձեռնարկումներ մշակել, վորոնցով ապահովվի կոլտնտեսությունների մեջ վար-ձով աշխատող բատրակներին ու բատրակուհիներին կոլտնտեսությունների մեջ ներգրավելը:

Պլենումը նպատակահարմար է գտնում օգտագոր-ծել կոլտնտեսություններում վարձով աշխատող բարձր վորակի բանվորներին, ինչպես նաև մասնագետների (գյուղատնտես, ինժեներ, տեխնիկ և այլն) աշխա-տանքը: Միևնույն ժամանակ միությունը պաշտպանում է այս խմբի անդամների շա-հերը, ընդհանուր աշխատանքային որենս-դրության հիմունքով, կենտրոնում և տեղերում հա-մապատասխան հավաքական պայմանագրեր կնքելու միջոցով:

Հավանություն տալով նաև «Ցենտրոսոյուզ»-ի այն վորոշմանը, ըստ վորի 30 թ. ընթացքում բոլոր բատրակներն ու բատրակուհիները անխտիր պետք է ներգրավվեն սպառողական կոոպերացիայի մեջ, պլե-նումը «Ցենտրոսոյուզ-ի և տեղական բոլոր կոոպե-րատիվ ու միութենական մարմինների ուշադրությունն է հրավիրում այս խնդիրն իրագործելու համար դյու-

ցում յուրացման և սիստեմատիկ աշխատանք ծավալելու անհրաժեշտության վրա:

Նշելով, որ գյուղական զարգացած անասնաբուծական շրջաններում (Նիժնի Նովգորոդի, Մոսկվայի և այլ շրջաններում) բատրակության վիճակը շատ ծանր է, դրա հետ միասին անասնաբուծության հիման վրա աճում են կապիտալիստական տարրերը գյուղում,— պլենումը խոշոր գործնական նշանակություն է տալիս բատրակությանը անասնաբուծական կոոպերացիայի մեջ ներգրավելուն և հավանություն է տալիս անասկոոպ միությանը, որի համաձայն 30 թվի ընթացքում ոչ պակաս քան հարյուր հազար բատրակներ և բատրակուհիներ պետք է ներգրավվեն անասնաբուծական արտելների մեջ: Միութենական մարմիններն այդ շրջաններում պետք է անմիջականորեն մասնակցեն անասնաբուծական կոոպերացիայի շինարարության և բատրակության արտադրական կոոպերացման աշխատանքներին:

## ԱՄՐԱՊՆԴԵՆՔ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԸ.

### Խորհրդային և անտառա–արդյունաբերական տնտեսություններում մեր շարքերի հասարակական ինքնաստուգման համար.

Պլենումը գտնում է, որ մասսայական կոլեկտիվացումը պահանջում է միության այն անդամներից, որոնք իրենց կապը չեն կտրել գյուղական տնտեսությունների հետ, ոչ միայն ակտիվ մասնակցություն ցույց տալ կոլտնտեսության շինարարությանը, այլ և կոլտնտեսության մեջ մտնել ու իրենց գյուղատնտեսության վայրում կոլտնտեսություն կազմակերպելու նախաձեռնողները լինեն:

Պլենումը գտնում է, որ գյուղացիական տնտեսության հետ անձնական կապ ունեցող յուրաքանչյուր միության անդամի առջև դրված է կոլտնտեսություն մտնելու և խոշոր հանրայնացված կոլտնտեսության շինարարության մեջ անմիջականորեն մասնակցելու հարցերը գործնականորեն դրվեն միութենական հասարակայնության կողմից:

Երբ գյուղատնտեսական անտառային բանվորը, կամ ծառայողը և մասնագետը՝ պետական ձեռնարկության մեջ մշտական աշխատանքի լինելով խզում է իր կապերը հողի հետ,—այդ դեպքում նա իր տնտ. ամբողջ ինվենտարը հանձնում է կոլտնտեսությանը կամ խորհրդային տնտեսության այն պայմաններով, որոնց վերաբերմամբ նա համաձայնության է գալիս այդ տնտեսությունների վարչության կամ ադմինիստրացիայի հետ:

Արտադրության միջոցների, սերմերի, անասունների և այլն վաճառումն ու փչացումը համարվում է մի վարմունք, որն անհամատեղելի յէ միության անդամ լինելու հետ: Այդ դեպքում միութենական մարմիններն այդպիսիներին միությունից հեռացնելու հարցն են դնում:

Պլենումը բոլոր միութենական մարմինների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ կուլակային կամ նրանց մոտիկ կանգնած տարրերը կարող են վոչ օրինական ճանապարհով իրենց ստացած անդամակցական գրքույկներն օգտագործել վորպես միջոց՝ կոլտնտեսության մեջ խցկվելու համար:

Ամեն կերպ աջակցելով միության անդամների՝ կիսապրոլետարների և աշխատավորական տնտեսություն ունեցող գյուղացիների կոլեկտիվացման, միու-

թյունը պետք է վճռական պայքար մղի այն բոլոր անձնավորությունների ընդունման դեմ (կոլտնտեսություններում), վորոնք շահագործողական տնտեսություն ունեն և անմիջապես հարց դնել այդ թե՛ միությունից և թե՛ կոլտնտեսություններից հեռացնելու համար:

Անհրաժեշտ է այս կողմից մեր շարքերն ստուգել բոլոր շրջաններում, բայց առանձնապես կարևոր է այդ գործը կատարել անհապաղ համատարած կոլեկտիվացման շրջաններում, ըստ վորում այս աշխատանքին պետք է տալ հասարակական ինքնաստուգման բնույթ ակտիվ մասնակցության կանչելով գյուղատնտեսական բանվորներին ու բանվորուհիներին:

Պլենումը նշում է, վոր խորհրդային տնտեսություններում մեքենա-տրակտորային կայաններում, կոոպերացիայի ձեռնարկություններում, տնտեսա-արդյունաբերական տնտեսություններում աշխատողների նույնիսկ մշտական կադրերը զգալի չափով աղտոտված են վոչ պրոլետարական, իսկ հաճախ նաև հասարակական անհարազատ տարրերով (կուլակային տնտ. հետ կապվածներով, նախկին կալվածատերերով ու նրանց ընտանիքի անդամներով և այլն):

Պլենումն արտահայտվում է հօգուտ հասարակական ինքնաստուգման, վոր պիտի կատարվի միութենական մարմինների ղեկավարությամբ և իրենց՝ բանվորների նախաձեռնությամբ ու տարածվի խորհրդային և տնտեսա-արդյունաբերական տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերացիայի, արդյունաբերական ձեռնարկների մեջ յեղած շտատային աշխատողների վրա:

## ԳՅՈՒՂԻ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ ԿՈՒՂԱՐԿԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱ-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Պլենումը գտնում է, վոր խորհրդային տնտեսություններում, անտառա-արդյունաբերական տնտեսություններում և այլ ձեռնարկներում՝ իբրև մշտական բանվորներ, ծառայողներ և մասնագետներ՝ պետք է թողնել այն անձանց միայն, վորոնց համար վարձու աշխատանքը ապրուստի միակ միջոցն է հանդիսանում:

Խորհրդային տնտեսությունների այնպիսի բանվորների փոխարինումը, ինչպես, որինակ՝ դարբինները, փականագործները և ուրիշներն են, վորոնք յեթե գյուղացիական տնտեսություն ունեն, պետք է կազմակերպված ձևով կատարվի այն հաշվով, վոր նրանք կոլտնտեսությունների մեջ ներգրավվելով՝ վորակյալ բանվորական ուժ դառնան կոլխոզների համար, միևնույն ժամանակ խորհրդային տնտեսությունները բանվորական ուժերով ապահովել, այնպիսի բանվորական ուժերով, վորոնց ապրուստի միակ միջոցը վարձու աշխատանքն է:

Վորակյալ բանվորներ նախապատրաստելիս, պետք է հաշվի առնել տրակտորներն անընդհատ աշխատեցնելու անհրաժեշտությունը (յեռահերթ աշխատանքը և անընդհատ-հնգորյակ), դրա հետ միասին՝ գյուղացիական տնտեսության հետ կապված խորհրդային տնտեսություններում աշխատող բանվորներին կոլտնտեսություններում ընդգրկելու և նրանց պրոլետար ու արդյունաբերական գործադուրկ բանվորներով փոխարինելու համար:

Պլենումը հանձնարարում է Կենտկոմի նախագահությանը տնտեսական մարմինների և գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնների հետ միասին հատուկ դիրեկտիվ տալ վերոհիշյալ վորոշումը կենսագործելու համար:

Պլենումն Աշխժողկոմատի և տնտեսական մարմինների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր յուրաքանչյուր խորհրդային տնտեսության մեջ մշտական բանվորների ընտանիքի անդամներից սովորաբար բանվորական ուժի վատ օգտագործվող ռեզերվ (պաշար) կա, ինչպես նաև այն փաստի վրա, վոր մինչև այժմ բոլոր խորհրդային տնտեսություններում բանվորներն ամբողջ տարին աշխատում են վորպես օրավարձի կամ սեզոնային բանվորներ:

Բացառիկ նշանակություն տալով խորհրդային տնտեսության բանվորների աշխատանքի պայմանների մասին Խորհրդ. Միության Ժողկոմխորհի հրատարակած վորոշմանը՝ պլենումն առաջարկում է միությենական բոլոր մարմիններին, վոր նրանք բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնեն այդ վորոշումը կենսագործելու ուղղությամբ:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՅՈՒՂԻՑ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԲԱՏՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՂԱՐԿՎԵՆ

Վերոհիշյալ ձեռնարկումների հետ միասին պլենումը հանձնարարում է նախագահությանը հարց դնել այն մասին, վոր գործնական միջոցներ ձեռք առնվեն առաջին հերթին բատրակությունը քաշելու դեպի արդյունաբերության և շինարարության այն առանձին

ճյուղերը, վորոնք ոգտվում են գյուղական բանվորական ուժերից:

Անտառային տնտեսություն, խոշոր խորհրդային տնտեսությունների, շինարարական արդյունաբերական առանձին ճյուղերի համար մշտական կադրեր ստեղծելու հարցի գործնական լուծումը, դրա հետ միասին պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների մեջ կուլակների խցկվելուն հակազդելու իսկական միջոցը պետք է հանդիսանա Աշխժողկոմատի և միության միջոցով կազմակերպված այն ձեռնարկությունը, վորով հարյուր հազարավոր բատրակներ պետք է այդ աշխատանքներում տեղափոխվեն (այն չափով, ինչ չափով այդ ձեռնարկությունները գյուղական բանվորական ուժի կարիք են զգում):

Ձեռնարկատի փորձը հաստատում է, վոր այդ հնարավոր է, և, բացի այդ, բատրակությունը, վորն իր կողմով գլխավորապես չքավորներից է բաղկացած, արագ ու հաջող կերպով է սովորում, կարճ ժամանակում բարձրացնում է իր վորակը և խոշոր արտադրության պայմաններում բացառիկ վոգևորությամբ է աշխատում (որինակ հացահատիկային խորհրդային տնտեսությունների,—տրակտորիստների բազմահազար բանակը):

Պլենումը գտնում է, վոր այս ձեռնարկումն ամենից առաջ թելադրվում այն հանգամանքով, վոր խորհրդային տնտեսությունները, անտառային տնտեսությունները և արդյունաբերական առանձին ճյուղերը ամեն տարի բանվորական ուժի մեծ պակաս են զգում:

Բացի այդ, արդյունաբերական և շինարարության

բազմաթիվ ճյուղերում շատ անձնավորություններ են աշխատում, վորոնք կապված են գյուղի կուլակային տնտեսությունների հետ, մինչդեռ բատրակների և բատրակուհիների համար այդ ձեռնարկությունները մուտք գործելը դժվար է, վորովհետև այդ կողմից Փար-գործկոմների և Աշխժողկոմատի մարմինների դասակարգային աչալրջությունը թույլ է:

Պլենումը գտնում է, վոր պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում վարձու աշխատողների պրոլետարական կազմը ապահովելու գործնական կարևորագույն միջոցներից մեկը բատրակության միջավայրից մասսայական չափերով բանվորական ուժեր պատրաստելն է Ջեռնարկատի որինակով՝ դասընթացներում և արտադրության մեջ:

Այդ բոլոր ձեռնարկություններում բատրակ պրոլետարին պետք է գյուղական բանվորական ուժի կարիք զգալու չափով աշխատանք տրվի գործադուրկ արդյունաբերական բանվորից հետո:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՉԱՓԵՐՈՎ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՑ ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ

Միության Կենտկոմի պլենումն Աշխժողկոմատին 30—31 թ. համար առաջադրում է հետևյալ գործնական առաջարկները՝ բատրակներից ու բատրակուհիներից ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի համար բանվորական ուժեր պատրաստելու վերաբերյալ:

1. Խորհրդային տնտեսությունների համար վոչ պակաս, քան 200.000 հոգի.

2. Մեքենատրակտորային և կոլտնտեսությունների

համար վոչ պակաս քան 150·000 հոգի·

3· Անտառային մթերումների և գետերով անտառանյութ փոխադրելու համար 200·000 հոգի·

4· Գյուղական արդյունաբերության համար վոչ պակաս քան 50·000 հոգի·

5· Շինարարության համար վոչ պակաս, քան 100·000 հոգի·

6· Արդյունաբերության և տրանսպորտի համար վոչ պակաս 100·000 հոգի·

7· Արդյունաբերական և հողոգտագործական կոլոնիզացիայի համար վոչ պակաս, քան 50·000 հոգի·

Ընդամենը վոչ պակաս, քան 850·000 հոգի:

Պլենումը գտնում է, վոր այս բոլոր ձեռնարկումները տնտեսապես շահավետ են յերկրի ինդուստրիալիզացիայի և ժողովրդական տնտեսության պետական ու կոոպերատիվ հատվածի պրոլետարական կադրերը ամրապնդելու շահերին համապատասխան են:

Կենտկոմի պլենումը նշում է, վոր ժողովրդական տնտեսության վերաբերյալ բանվորական ուժերի պլանային մատակարարման գործում Աշխժողկոմատի մարմինների աշխատանքի վիճակը ծայր աստիճանի անբավարար է, և վոր այս խնդրին տնտեսական և միութենական մարմինները անտարբեր և անհոգ վերաբերմունք են ցույց տալիս: Դրա հետևանքով հաճախ, հատկապես սեզոնային աշխատանքների ժամանակ, արտադրանքը փչանում է ու արտադրական պլանը չի իրագործվում (որինակ՝ ճակնդեղային և պետական այլ պլանտացիաներում, անտառային նյութերի շինարարության մեջ և այլն):

Բատրակներից բանվորական ուժեր պատրաստելու

հետ միասին, անհրաժեշտ է վճռական պայքար մղել բոլոր պետական ու կոոպերատիվ ձեռնարկություններում և տնտեսություններում բանվորների կադրի կուլակային և նրանց մոտիկ կանգնած տարրերից մաքրելու գործում:

Այս առթիվ պլենումը նշում է, որ միութենական մարմինները չեն կենսագործել Կենտկոմի նախորդ պլենումների որոշումները, որոնք բազմաթիվ անգամ պարտադրել են միութենական բոլոր մարմիններին, որ նրանք գործազուրկ բանվորներից աշխատավորական արտելներ կազմակերպելու գործին ձեռնարկեն՝ անտառամթերումների մեջ աշխատեցնելու համար ու այլ գործնական միջոցների դիմեն գործազրկությունը մեղմացնելու բատրակության այն մասի մեջ, որի համար վարձու աշխատանքն ապրուստի միակ միջոցն է հանդիսանում:

Պլենումն առաջարկում է միության այն բոլոր մարմիններին, որոնց մեջ մտնող միության անդամների կազմում գործազուրկ բատրակությունը մեծ թիվ է կազմում, անհապաղ ձեռնարկել հիշյալ աշխատանքներին՝ այն կապելով բատրակության կոլեկտիվացման և խորհրդային ու անտառա–արդյունաբերական տնտեսություններում մշտական կադրեր ստեղծելու ընդհանուր աշխատանքի հետ:

Պետք է ջանք թափել, որ Աշխժողկոմատի մարմինների և տեղական մարմինների կողմից այս ուղղությամբ աշխատանքները լայնորեն ծավալվեն, անտառային տնտեսության մեջ մշտական կադրեր ստեղծելու վերաբերմամբ կառավարության կողմից արդեն իսկ կայացրած վճռի և այլ որոշումների հիման վրա:

Գյուղանտառ բանվորների միությունը և նրա բոլոր մարմինները, գործնականորեն գնելով այս խնդիրները՝ պետք է բատրակներին դեպի ժողովրդական տըն-տեսության սոցիալիստական շարժման, կազմակերպման, առաջխաղացման նախաձեռնողներն ու ակտիվ մասնակիցները դարձնեն:

Այն շրջանների միութենական մարմինները, որտեղ բանվորական ուժի ավելցուկ և գործազուրկ բատրակների (միության անդամ) զգալի մասսաներ կան, անմիջականորեն պետք է կապվեն այն շրջանների միութենական մարմինների հետ, որտեղ բանվորական ուժի պակաս է զգացվում (անտառ մթերումներ և այլն) և գործազուրկներից բատրակային արտելներ կազմակերպելով՝ ուղարկեն հիշյալ տեղերն աշխատելու:

Պլենումը հանձնարարում է նախագահությանը՝ այս հիմունքով ամենակարճ ժամանակամիջոցում՝ Աշխժողկոմատի հետ միասին ցուցմունքներ տալ ըստ առանձին շրջանների, այս բոլոր ձեռնարկումներն իրագործելու համար:

## ՑԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նշելով, որ մոտակա ժամանակաշրջանում հետամնաց շրջաններում բատրակության մեջ կատարելիք աշխատանքը, առանձնապես այն աշխատանքը, որ ուղղված է նրա շահերի պաշտպանությանը, դեռ հսկայական նշանակություն ունի, Կենտկոմի պլենումը գտնում է, որ գյուղական և անտառային տնտեսության նոր ետապում բոլոր միութենական մարմինները, գլխավորելով բանվորական մասսաները, պետք է շինարարական ու

կազմակերպչական հետևյալ աշխատանքների ակտիվ մասնակիցները դառնան :

1. Մեքենայացված և ինդուստրացված բոլոր խորհրդային տնտեսությունների մեջ :

Անմիջականորեն մասնակցելով գոյություն ունեցող խորհրդային տնտեսությունների ամրապնդմանը և գյուղատնտեսության զանազան ճյուղերում նոր խորհրդային տնտեսությունների կառուցմանը՝ միությունը պետք է գործահավաքի յենթարկի իր շուրջը համախմբված պրոլետարական մասսաներին՝ պայքարելու :

ա) Խորհրդային տնտեսությունների հողերի տարածությունն ընդլայնելու համար՝ յուրաքանչյուր շրջանում, խորհրդային տնտեսությունների միությունների յուրաքանչյուր սիստեմում :

բ) Պրոլետարական մշտական կադրեր պատրաստելու և ավելացնելու համար :

գ) Խորհրդային տնտեսության համապատասխան գործերի լրակատար մեքենայացման, ելեկտրիֆիկացիայի և քիմիզացիայի համար :

դ) Աշխատանքի նյութական-կենցաղային պայմանների ամեն կերպ բարելավելու համար (բնակարական ռեալ աշխատավարձ և այլն), արտադրողականության մշտական աճման հիմունքով :

յե) Խորհրդային տնտեսությունների ինդուստրալիզացիայի և այդպիսիք խոշոր գյուղատնտեսական արդյունաբերական կոմբինատների դարձնելու համար :

զ) Մեքենաների և աշխատանքի արտադրողականությունն առավել չափով բարձրացնելու համար (անընդհատ անցնել, մշակման նորմաներ, գործարք,

պարգևավարում և այլն), արտադրական կուլտուրաների և դաշտերի դեմ կռվելու համար։

2. Անասնա-արդյունաբերական խոշոր տնտեսությունների մեջ, նրանցում անասնային բանվորների մշտական կադրերի կազմակերպիչը դառնալով և ձգտելով՝

ա) Անասնա-արդյունաբերական տնտեսությունների արտադրության անընդհատության ամբողջ տարվա ընթացքում։

բ) Յուրաքանչյուր անասնաարդյունաբերական տնտեսության փայտանյութի խակական ֆաբրիկա դարձնելուն (տնտեսության մխանական ոլյան, սևտական դումարներ, տրակտորային բազաներ, ծառահաման, անասնամշակման աշխատանքների մեքենայացում և այլն)։

գ) Բատրակության և չքավորության միջավայրից ամենակարճ ժամանակամիջոցում իշխող կադրերի (վերատեսուչներ, կազմակերպիչներ, տեխնիկական ղեկավարներ և այլն) և անասնային վորակյալ բանվորների մշտական կադրերի պատրաստմանը։

3. Գյուղական խոշոր հանրայնացված տնտեսության (կոլեկտիվ խոշոր տնտեսությունների)։

Գյուղում հիմնական միության հանդիսանալով՝ գյուղբանկոմից սկսած մինչև միության կենտկոմը իրենց ամբողջ աշխատանքի որգանական մասը մասսայական կոլտնտեսական շարժմանն ու շինարարությանը մասնակիցներ պետք է դարձնեն։

Այս աշխատանքը միությունը կատարում է կոլտնտեսական շինարարության մեջ՝ խորհրդային տնտեսությունների և նրանց բանվորների դերն ուժեղաց-

նելու միջոցով (մեքենա-տրակտորային բազաներ, խորհրդային տնտեսությունների և կոլտնտեսությունների միությունները և այլն), կոլտնտեսության մեջ յեղած բատրակների, ՄՏԿ և կոլտնտեսությունների պրոլետարական կադրերի միջոցով:

Պլենումը գտնում է, որ դրա համար միութենական մարմինների ամենից առաջ իրենց աշխատանքը պետք է վերակառուցեն խորհրդային տնտեսություններում և անտառա-արդյունաբերական տնտեսություններում՝ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով բանվորների ամրապնդման, մասսայական աշխատանքի ծավալման, հարվածայնության ըստ ամենայնի աջակցության և զարգացման վրա: Նրանք պետք է իրենց աշխատանքի հիմնական բովանդակությունն արտադրական պլանների իրագործելն ու գերազանցելը դարձնեն:

Վճռական պայքար մղելով այն յերևույթի դեմ, որ միութենական մարմինների աշխատանքը հետ է մնում խորհրդային տնտեսությունների և անտառա-արդյունաբերական տնտեսությունների սոցիալիստական շինարարության տեմպերից՝ միությունը պետք է սոցիալիստական արտադրության դեմ հանդիման կանգնի— արտադրական խորհրդակցությունների գործունեությունն ամրապնդելու, հարվածայնությունն ամեն կերպ զարգացնելու և նրան աջակցելու, խորհրդային տնտեսությունների և անտառային բոլոր բանվորներին ու բանվորուհիներին սոցմրցման մեջ ներգրավելու հիմունքով:

Նշելով, որ հաճախակի յեն դարձել խորհրդային տնտեսությունների հրկիզման, ցանքերի, անասուննե-

րի, ինվենտարի և մեքենաների փչացման դեպքերը կուլակային և այլ վնասարար տարրերի կողմից՝ պլենումը գտնում է, վոր դասակարգային պայքարի սրումը գյուղում պահանջում է յուրաքանչյուր բանկոմից, խորհրդային տնտեսության ակտիվից — և խորհրդային տնտեսության բանվորների ամբողջ մասսայից, վոր նրանք խստագույն դասակարգային աչալրջություն առաջ բերեն և շրջանկատ լինեն խորհրդային իշխանության և սոցիալիստական շինարարության բոլոր թըշնամիների վերաբերյալ:

## ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Խորհրդային տնտեսության ներսում իր պրոլետարական շարքերը, խտացնելով, գյուղացիական տընտեսության հետ բոլոր կապվածներին կոլտնտեսությունները ներգրավելով, խորհրդային տնտեսություններում աշխատողների միջից կուլակային և դըրանց մոտիկ տարրերին անխնա քշելով՝ խորհրդային տնտեսությունների բանվորները բանկոմի գլխավորությամբ պետք է ձգտեն.

1. Յուրաքանչյուր խորհրդային տնտեսություն, վորպես հետևողական սոցիալիստական տիպի ձեռնարկություն, գյուղատնտեսական հում նյութի մշակման որինակելի ֆաբրիկայի վերածել այն հաշվով, վոր յուրաքանչյուր խորհտնտեսության մեջ արտադրությունն ու աշխատանքը կազմակերպվի արտադրության առավել առաջավոր հարվածային ձեռնարկությունների տիպով.

2. Խորհրդային տնտեսության կողմից արտադրական հասարակական կազմակերպված օգնությունն հասցնել գյուղացիության չքավոր-միջակ մասսաներին, վորպեսզի նրանք անհատական տնտեսությունից կոլեկտիվ հանրայնացված տնտեսության անցնեն։ Այս հիմունքով պետք է ապահովվի խորհրդային տնտեսությունների կազմակերպչական ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։

3. Պրոլետարական ազդեցությունն ուժեղացնել խորհրդային տնտեսությունը շրջապատող գյուղերի հասարակական և տնտեսական կյանքում, կատարելով բատրակության և հովվության մեջ մասսայական բացատրական աշխատանք։

Համատարած կոլեկտիվացման շրջաններում խորհ-տնտեսությունների բանկոմները օգնում են գյուղբանկոմին, վոր նրանք մասնակցեն կոլեկտիվացման շարժմանը, բատրակներին ու բատրակուհիներին կոլտնտեսություն ներգրավել և նրանց մշտական աշխատանքի ուղարկել խորհրդային տնտեսությունների մեջ։ Գյուղբանկոմը պետք է աշխատի նաև, վոր բատրակությունը կազմակերպված ձևով մասնակցի գյուղի չահագործող դասակարգի վերացման գործին։

Այդ շրջաններում խորհրդային տնտեսությունների բանկոմներն օգնում են գյուղբանկոմներին, վոր նրանք կազմակերպեն բատրակությանը կոլտնտեսություններ մտնելու, միության կողմից վարձողին առաջադրված պայմանների շուրջը ակտիվ պայքարելու համար, բոյկոտ կամ գործադուլ հայտարարելու դեպքում, նրանք այդ պայքարի ընթացքում, խորհրդային

տնտեսության հասարակայնության կողմից բարեքա-կությանն պաշտպանում են ամեն տեսակ աջակցությամբ:

Նույն ուղղությամբ աշխատում են նաև անտա-ռային արդյունաբերական տնտեսությունների բան-կոմները՝ իրենց տնտեսության պայմաններին համա-պատասխան:

4. Պրոլետարական դիկտատուրայի գյուղական մարմինների խորհուրդների միջոցով բատրակային ու չքավորական ակտիվին կազմակերպված օգնություն ցույց տալով, նրա աշխատանքի ընթացքում բատրա-կա—չքավորական խմբակներ կազմակերպելով, ամբո-ղջային հասարակայնության ակտիվ մասնակից դարձ-նելով այն պայքարին, որը մղում են բատրակ—չքավո-րական և միջակային մասսաները և մասսայական կո-լեկտիվացման և կուլակության, որպես դասակարգ, վերացնելու համար:

## ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ— ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՁԵՎԵՐ.

Ապարատի վճռական վերակառուցման և նոր կադրերի մասսայական առաջքաշման համար.

Այն հանգամանքը, որ միությունը հետ է մնում խորհրդային տնտեսությունների և կոլեկտիվացման շարժման արագ տեմպերից, հատկապես համատարած կոլեկտիվացման շրջաններում, դրա հետ միասին նաև այն, որ միութենական աշխատանքն անտառային տնտեսության շրջաններում բացառիկ թուլությամբ է կատարվում,— այս բոլորը պահանջում են մի կող-մից՝ զարգացման նոր ետապում միության աշխատան-քի բովանդակությունը հիմնովին փոխել, մյուս կող-մից՝ միության ապարատը, աշխատանքի տեմպն ու

մեթոդները վճռականապես վերակառուցման ենթար-կել։

Գտնում է, վոր միության կողմից առաջադրվող բոլոր խնդիրների կենսագործումը պահանջում է մասսայական ինքնաքննադատության հիմունքով անողոք պայքար մղել աշխատանքի բոլոր թերությունների դեմ, վճռականապես վերակառուցել և կրճատել վճարովի ապարատի ծախսերը և է՛լ ավելի վճռականորեն թարմացնել միության կադրերը՝ արտադրությունից նոր հարվածայիններ առաջ քաշելու հիմունքով։

Պրոֆակտիվի մի մասի հասարակականորեն անհարազատ տարրերով աղտոտված լինելը, միութենական առանձին մարմինների պրակտիկայում աջ թեքման կոնկրետ փաստերի հայտաբերումը և կուլակի հետ հաշտվելու դեպքերը (Ցեկատերինովկա),— այս բոլորը հանդիսանում են և կարող են հետագայում հանդիսանալ գյուղական մեր խնդիրների իրագործման լուրջ խանգարիչներ, եթե շուտ միջոցներ ձեռք չառնվեն միության ղեկավար կադրերը թարմացնելու ուղղությամբ։

Պահանջվում է, վոր միութենական մարմինների կազմի վոչ պրոլետարական տարրերը և բոլոր բյուրոկրատացած, մասսաներից կտրված պրոֆաշխատավորները փոխարինվեն վերջին տարիների ընթացքում աճած գյուղատնտեսական և անտառային բանվորների կադրերով։

Արտադրության մեջ աշխատող բանվոր հարվածայինների միջավայրից կուրսերում սեփական պրոֆակտիվ պետք է պատրաստել՝ լայն չափերով փոխարի-

նելու համար այն բոլոր սեփականատիրական տարրերին, վորոնք դեռ չեն հասկացել գյուղի տնտեսական կենցաղային կյանքի մեջ առաջացող հեղափոխությունը: Միությունը պետք է անհապաղ մարտական գործավարքի յենթարկի իր բոլոր ուժերը՝ գյուղատնտեսական և անտառային տնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում գործադրելու համար:

Պլենումն առաջարկում է միութենական բոլոր մարմիններին անմիջապես ձեռնարկել այս վերակառուցման կադրերի ամրապնդման գործին, այն հաշվով, վոր միությունն ամենակարճ ժամանակամիջոցում կարողանա առավելագույն արդյունքների հասնել՝ բանվորների ու բատրակության, ծառայողների ու մասնագետներին պատրաստելու և նրանց գյուղատնտեսական վերակառուցման գործին ակտիվորեն մասնակից անելու համար:

## ԽՈՍՔԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾ

Կենտկոմի պլենումն անհրաժեշտ է համարում ձեռք առնել հետևյալ միջոցները·

1· Միութենական ղեկավար մարմինների գծով 30 տոկոսով կրճատել վճարովի ապարատը և նրա կադրերը առավելագույն չափով թարմացնել՝ արդյունաբերությունից հարվածայիններին, գյուղատնտեսական-անտառային բանվորներին և բանվորուհիներին միության մարմիններում վճարովի աշխատանքի բերելու միջոցով:

2· Աշխատանքի ապարատային մեթոդներից վճռականապես անցնել նոր մեթոդների՝ ամբողջ աշխատանքը ընթացքում կամավորական ակտիվի, արտադր-

բական հարմարությունների, բանվորական բրիգադների, սարքին ցանցի — արտադրական խորհրդակցություն-ների վրա հիմնվելով, միության մեջ հրահանգիչների թիվը կրկնապատկելով և միության ցանցի օղակներն ու ապարատի մյուս բանվորների թիվը կրաճատելու միջոցով:

3. Միութենական ապարատը վերակառուցելիս, հատուկ ուշադրություն դարձնել միության կողմից ինժեներա—տեխնիկական ուժերի միջև տարվելիք աշ-խատանքի վրա, ուժեղացնելով միության մարմինների պատասխանատվությունը գյուղատնտեսական մասնա-գետների օգտագործման վերաբերյալ:

4. Ապարատի յուրաքանչյուր բնագավառի և տեխնի-կական աշխատավորի պատասխանատվության սահ-մանը բարձրացնել իրեն հանձնարարված գործի և միու-թյան մարմինների աշխատանքների վերաբերմամբ՝ ա-վելի մեծ կարևորություն տալով մասսայական աշ-խատանքներին (մասսայի, բանթղթակիցների շարժման, պատի թերթերի, դաշտային ապարանների և այլն օգ-տագործմանը):

5. Միութենական վերադաս մարմինների կողմից ստորադասների հետ ունեցած ֆինանսական ինֆորմա-ցիան և վիճակագրական կապը պարզացնել՝ ուժեղաց-նել միության անդամների մասսայական վերահսկո-ղությունն ապարատի աշխատանքների վերաբերմամբ: Մասսաների մասնակցությամբ ստուգում կազմակեր-պել, պարզելու՝ արդյո՞ք միության մարմիններն ի-րագործել են այն վորոշումները, վորոնք շոշափում են արտադրության և միության անդամների շահերը:

6. Կենտկոմի և տեղական մարմինների ղեկավա-

բության ավելի մասնավորված բնույթ տալ ըստ տն-տեսության ճյուղերի (խորհտնտեսություններ, ան-տառային տնտեսություններ), միության անդամների առանձին խմբակների (բատրակություն, ծառայողներ, բանվորներ և մասնագետներ), նույնպես և ըստ տն-տեսության առանձին ճյուղերի:

7. Միութենական բոլոր մարմինների բյուջեյում ծախքերի մեծագույն մասը հատկացնել բատրակների և բանվորուհիների յերեխաների ու գյուղատնտեսական բանվոր յերիտասարդության շարքերից կադրեր պատրաստելու գործին, միենույն ժամանակ մասսայական քաղ-կրթական աշխատանք կատարել անգրագիտության և կիսագրագիտության վերացնելու համար:

8. Պրոֆկուրսերի ունկնդիրների թիվը հասցնել վոչ պակաս 5000-ի, յուրաքանչյուր հանրապետական, մարզային և յերկրային կազմակերպություններին կից պրոֆակտիվի մշտական կուրսեր կազմակերպել: Պրոֆ-կուրսեր պետք ընդունվեն գլխավորապես խորհրդային տնտեսությունների և անտառային տնտեսությունների բանվորներից ու բանվորուհիներից:

Խորհրդային խոշոր տնտեսությունների մեջ մասսայական աշխատանք կատարելու, բատրակության կոլեկտիվացման և կոլտնտեսության շինարարության մասնակցելու, կադրերի պատրաստման, դրա հետ միասին անտառային տնտեսության վերակառուցման մասին պլենումի կայացրած վորոշումների կենսագործումը լավագույն արդյունքը կհանդիսանա, վոր միությունն իսկապես վերակառուցում է իր աշխատանքները և անցնում աշխատանքի նոր ձևերին:

Հավանություն տալով ցանքի կամպանիայի նա-

խաղաղարարման և կատարման աշխատանքներին, միության և կոմսոմոլի մասնակցության գործնական այն պլանին, վոր մշակել է նախագահությունը Կոմսոմոլի Կենտկոմի հետ միասին՝ պլենումն առաջարկում է միության բոլոր մարմիններին խորհրդային տնտեսությունների գարնանացանի ստուգատեսի օրը, բանվորների, ծառայողների և մտավորականների ընդհանուր ժողովներում նախապատրաստել ցանքերին լրիվ չափով պատրաստ լինելու գործը:

Պլենումը միության բոլոր մարմիններին և ակտիվին կոչ է անում առավելագույն արդյունքների հասնել խորհրդային և անտառային տնտեսությունների Լենինյան կոչի շարքերը խտացնելու գործում:

## ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՖՇԱՐԺՄԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՆ Է

Խորհրդային տնտեսությունների շինարարության թափը, խոշոր տնտեսությունների մեքենայացման թափը պահանջում են, այդ շինարարության հարցերը բանվոր դասակարգի գործը դարձնել:

Ռեալ աշխատավարձի համար արհմիությունների մղած պայքարում խոշոր նշանակություն է ստանում գյուղատնտեսական մթերքների պետական արտադրության կազմակերպման և զարգացման գործը (կաթնատնտեսական խոշոր ֆերմաներ, բանջարանոցային տնտեսություններ արդյունաբերական կենտրոններում, հացահատիկային տնտեսություններ և այլն):

Արդյունաբերական այն ճյուղերի բանվորները միավորող արհմիությունները, վորոնք աշխատում են գյուղատնտեսական հում նյութով, պետք է իրենց արտադրական տնտեսական աշխատանքի մի մասը համա-

րեն խոշոր խորհտնտեսությունների կազմակերպման գործը, որոնք արդյունաբերական տվյալ ճյուղի համար հում նյութ են արտադրում:

Այս կապակցությամբ հատուկ կարևորություն է ստանում խորհտնտեսությունների վրա ամրագրված ձեռնարկությունների շեֆության սահմանը (տեքստիլը՝ բամբակ, վուշ, կաշեգործներ՝ կաշի և այլն): Ամեն կերպ պետք է սերտացնել և զարգացնել ինդուստրիալ միությունների նախաձեռնությունը խորհրդային և անտառ-արդյունաբերական տնտեսությունների շեֆությունը վերցնելու ուղղությամբ («Էլեկտրազավոդի», «ԱՄՈ»-յի, «Դինամոյի», «Մուրճ ու Մանգաղի» փորձը):

Պլենումը գտնում է, որ միության առաջ դրված խնդիրները և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանում նրա վճռական դերի ուժեղացումն էլ ավելի ակտիվություն են պահանջում բոլոր պրոֆմիություններից, հատկապես ինդուստրիալ միություններից ուժեր և միջոցներ տրամադրելու համար:

Կենտկոմի պլենումը վստահ է, որ ամբողջ պրոֆշարժման անմիջական հզոր աջակցությամբ մեր միությունը կիրագործի իրեն առաջադրված խնդիրները: Սոցիալիստական գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ ինդուստրիալ պրոլետարիատի կադրեր ուղարկելով, միությունը կոմկուսակցության ղեկավարությամբ կապահովի իր միջոցով միավորված մասսաների մասնակցությունը՝ սոցիալիզմի կառուցման և կուլակության, որպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու գործում:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039673

(144)

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

A 1/4548

# ՎՈՉ ՄԻ ԲԱՏՐԱԿ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐ ՅԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՊԻՏԻ ՄՆԱ ԱՌԱՆՑ „ԲԱՏՐԱԿ"-Ի

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| 1 ՏԱՐԻՆ | . . | 1 Ռ. | 40 ԿՈՊ. |
| 6 ԱՄԻՍԸ | . . | — | 75 » |
| 3 » | . . | — | 40 » |
| 1 » | . . | — | 15 » |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ ԿԱՐԵԼԻ ՅԵ «ԲԱՏՐԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ, ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ, ՄԱՄՈՒԼԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆԿՈՄՆԵՐԻ ՄՈՏ